

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐ

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից



ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն



Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT


Implemented by:

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC



ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից

2

Երևան, 2020

Ծրագրի մասին

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի նպատակն է ամրապնդել Հարավային Կովկասի հանրային հաստատությունների կարողությունները՝ մատուցելու ավելի որակյալ քաղաքացիակենտրոն ծառայություններ: Ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային, շրջանային և տեղական մակարդակներում գործող գործընկեր հաստատություններին խորհրդատվություն է տրամադրում ազգային բարեփոխումների նախագծման և իրականացման, ընդհանուր պայմանների բարելավման և ստանդարտների ու ուղեցույցների մշակման վերաբերյալ: Այն օժանդակում է առավելապես տեղական մակարդակում քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցման գործում առանցքային դերակատարների կարողությունների զարգացմանը: Տեղական զարգացման գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով Ծրագիրն աջակցում է մասնակցության և բողոքարկման մեխանիզմների ներդրմանը և դրանց վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանը: Ծրագիրն աջակցում է նաև շրջանային և տեղական տնտեսական զարգացման ռազմավարությունների և գործիքների

մշակմանն ու կիրառմանը: Գերմանիայի Կովկասյան նախաձեռնության շրջանակներում Ծրագիրը նպաստում է Հարավային Կովկասի երկրների միջև մասնագիտական գիտելիքի և փորձի փոխանակմանը:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շարունակությունն է: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՅԸ) կողմից Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՀՅԳ) կողմից: Ծրագիրն իրականացվում է հիմնական քաղաքական գործընկերոջ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ սերտ համակարգմամբ:

Հրատարակության մեջ առկա տեսակետներն անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՅԸ, ՇՀՅԳ և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:



Քարին Շեֆեր Հայաստանյան թիմի ղեկավար

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

Ընդամենը հինգ տարի առաջ Հայաստանն ուներ տեղական ինքնակառավարման խիստ մասնատված համակարգ՝ ավելի քան 900 համայնքով, որոնք զգալիորեն տարբերվում էին իրենց չափսերով, կարողություններով և ֆինանսական ռեսուրսների բաշխմամբ: Այս համայնքներից շատերում տեղական իշխանությունները դժվարանում էին իրականացնել նույնիսկ իրենց հիմնարար գործառույթները, ինչը հաճախ հանգեցրել է քայքայված հանրային ենթակառուցվածքների, իսկ տեղական ներուժը չի բավարարել եկամուտներն ավելացնելու և սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու համար:

Ընդամենը մի քանի տարվա ընթացքում, Հայաստանում իրականացվող վարչատարածքային բարեփոխման արդյունքում Հայաստանի համայնքների թիվը գրեթե կիսով չափ կրճատվեց: Համայնքների միավորման մի շարք գործընթացների շնորհիվ 465 համայնքներ միավորվեցին 52 միավորված համայնքների կազմում՝ մեկտեղելով իրենց կարողությունները, ռեսուրսները և ի հայտ բերելով իսկապես աննախադեպ հնարավորություններ տեղական տնտեսական զարգացման, ներդրումների ներհոսքի, բարձրորակ հանրային ծառայությունների մատուցման և քաղաքացիների արդյունավետ մասնակցության համար:

Ի սկզբանե Հայաստանի վարչատարածքային բարեփոխման գլխավոր նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար նպաստավոր միջավայրի ստեղծումն էր և տեղական մակարդակում այնպիսի կենսունակ կառույցների ձևավորումը, որոնք կօգնեին համայնքներին առավելագույնս արդյունավետորեն ծառայել իրենց բնակչությանը: Նոր հիմնված «մեկ պատուհան» սկզբունքով գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակները (ՔՍԳ), թերևս, կառուցվածքային

և կազմակերպական փոփոխությունների ամենաշոշափելի և ամենատեսանելի օրինակներն են: Այստեղ հնարավոր է դարձել մեկտեղել տեղական բնակչության առօրյան դյուրացնող մեծ թվով նորարարական լուծումներ:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը շարունակում է աջակցել միավորված համայնքներին բարելավելու իրենց կառավարչական կարողությունները և առանցքային գործառույթների իրականացումը համապատասխանեցնելու նոր պահանջներին: Ավելին, միավորված համայնքներում էլեկտրոնային կառավարման նորարարական գործիքների ներդրման և ՔՍԳ-ների հիմնման միջոցով ծրագիրը կնպաստի համայնքային վարչարարության արդիականացմանը և ծառայությունների մատուցման կատարելագործմանը: Ծրագրային բյուջետավարման օգնությամբ համայնքները կարող են առավել հեշտությամբ և արդյունքահեն ձևով կառավարել իրենց ծախսերը և դրանց վերաբերյալ դյուրըմբռնելի տեղեկություններ տրամադրել իրենց բնակչությանը: Արդյունքում, տեղական մակարդակում հանրային միջոցների օգտագործումն ավելի թափանցիկ և հաշվետվողական կլինի:

Համայնքներն առաջնային օղակ են նաև տեղական տնտեսական զարգացման համար: Պլանավորման կարողությունների զարգացումը միավորված համայնքներին հնարավորություն կտա մշակել տնտեսական զարգացման իրատեսական ռազմավարություններ, սահմանել առաջնահերթություններ և հատկորոշել տեղական ներդրումային ծրագրերի իրականացման նպատակային ոլորտներ: Ծրագիրը նաև աջակցում է տեղական մակարդակում կին քաղաքական գործիչների կարողությունների հզորացմանը՝ այդպիսով նպաստելով որոշումների կայացման գործընթացում կանանց դերի բարձրացմանը:

Այս գիրքը Ձեզ կտանի Հայաստանի տարբեր վայրեր և կներկայացնի համայնքների արձանագրած հաջողության պատմությունները, որոնք հնարավոր են դարձել քաղաքացիամետ միջամտությունների շնորհիվ: Գրքի վերնագիրը հուշում է, որ իմաստալից արդյունքները հեշտությամբ չեն տրվում. դրանց կարելի է հասնել ու պահպանել միայն «քայլ առ քայլ» տարբեր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավման և շարունակական նվիրման, պետական և տեղական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության

ու գործընկերության և միջազգային դոնորների ու զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համատեղ աջակցության միջոցով: Այս հրապարակումը մեկտեղել է հաջողության պատմությունները, տեղական մակարդակում որոշում կայացնողների ու համայնքային մարմինների աշխատակիցների հանրային հայտարարությունները, ինչպես նաև սեփական փորձով կիսվող քաղաքացիների կարծիքները վերջին փոփոխությունների արդյունքում իրենց համայնքում տեղի ունեցած դրական տեղաշարժերի մասին:

Հաճելի ընթերցում:

Միավորված
համայնքների
հաջողությունների
պատմությունները
բնակիչների աչքերով

Ախթալա

Ախթալա համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիսարևելքում՝ Դեբեդ գետի ձախ ափին՝ Լավար լեռան ստորոտում՝ ծովի մակերևույթից 740 մ բարձրության վրա: Հայաստանի մայրաքաղաք Երևանից մոտ 180 կմ, իսկ մարզկենտրոն Կանաճորից՝ 62 կմ հեռավորության վրա է: Միավորված համայնքը բաղկացած է Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում, ճոճկան և Նեղոց բնակավայրերից: Համայնքի ընդհանուր բնակչությունը մոտ 6000 է:



Ախթալա համայնքի ճոճկան գյուղն է:

Այն հիմնվել է 4-րդ դարում: Կլիման ձմռանը մեղմ է, ամռանը՝ շոգ, չորային: Հաճախակի են կարկտահարությունը, երաշտը, որից խիստ տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվողները: ճոճկանում ապրում է 1981 մարդ: Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, մեկ մշակույթի տուն: Գործող գրադարանն ունի 7512 անուն գիրք և գտնվում է մշակույթի տանը:





Նասիբ Կարապետյանը գյուղատնտեսական աշխատանքների տասնամյակների փորձ ունի և համայնքների միավորման գաղափարը սկզբից նրան մտահոգում էր. մտածում էր, որ համայնքների միավորման արդյունքում փոքր գյուղերը կոչնչանան կամ կտուժեն, բայց հիմա տեսնում է, որ համայնքի բյուջեն արդյունավետ է ծախսվում, և միավորումն, իրականում, գյուղի համար ավելի օգտակար էր:



«Կենտրոնացած բյուջեները միշտ էլ ձեռնտու են, որպեսզի հնարավորություն ունենան ինչ-որ գործեր կատարել»,- ասում է ճոճկանի հիսուն տարվա բնակիչ, գյուղատնտես Նասիբը:



Համայնքների միավորումից հետո իրականացվել են ճոճկանի փողոցների փոսալցման, զբոսայգու նորոգման, կանգառների կառուցման աշխատանքներ: Հիմնանորոգվում է ճոճկանի մշակույթի տունը: Իսկ մինչ այդ գյուղի բնակիչներն իրենց ազատ ժամանակն անցկացնում են մշակույթի տան այգում:

Իրինա Խուդիկյանը ճոճկանի խանութպանն է: Ուրախ է մշակույթի տան վերանորոգման առիթով, քանի որ երեխաները վերջապես զբաղմունք կունենան: **«Գյուղի երեխեքը գնում են Այրում, Ճնող կամ Ախթալա, իսկ որ մեր գյուղում լինի մշակույթի տուն՝ ավելի լավ: Նկարչության խմբակ կլինի, պարի, սպորտի. գյուղի համար դա մեծ բան ա»,-** ասում է Իրինան:



«Մեր գյուղի նման մեծ գյուղի համար մշակույթի պալատը շատ լավ բան ա: Մեծ գրադարան ունենք, վերանորոգումից հետո կենցաղային հարմարություններ են ստեղծվելու: Ծերերը, որ ազատ ժամանակ շատ են ունենում, նրանց համար էլ պետք է հնարավորություններ լինեն: Թեկուզ գնան Նայեն, թե ինչով են զբաղվում երիտասարդները»,- ասում է Նասիբ Կարապետյանը:

Մեծ և Փոքր Այրումներում լուծվում է գազի և ջրի խնդիրը, կառուցվել է ջրի ներքին ցանց:

Փոքր Այրումում ջրագծեր են քաշվում. բնակչությունը տասնամյակներ սպասած ջուրը շուտով կտեսնի իր տանը:





Մեծ Այրումի դպրոցի տնօրեն Սոֆյա Ավագյանը կարևորում է խմելու ջրի խնդրի լուծումը: Նա պատմում է, թե որքան դժվար է եղել երեսուն տարի դուլլերով ջուր կրել և նման պայմաններում երեխա մեծացնել: Նա կարծում է, որ այդ հարցի լուծումն անհնար կլիներ ապահովել միայն իրենց համայնքի բյուջեով:

«Մի ձեռքը ծափ չի տալիս: Անհրաժեշտ էր միջոցները միավորել խոշոր հարցերը լուծելու համար»,- ասում է Սոֆյան:



Նա հպարտորեն ընդգծում է, որ որդիները ծառայում են հայկական բանակում, իսկ ծառայությունն ավարտելուց ու բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադառնալու են հայրենի բնակավայր:

Նա նաև ուրախ է, որ կանգառներում տանիքներ կան, որոնց տակ անձրևոտ եղանակին պատասպարվում են տրանսպորտի սպասող համապուրոջիները: **«Փոքր Այրումից ամեն օր մոտ քսանհինգ երեխա գալիս է Մեծ Այրում դասի: Ցուրտ և անձրևոտ եղանակին երեխաները անձրևի տակ կանգնած սպասում էին մինչ տրանսպորտը մոտենա, իսկ հիմա ավելի ապահով կլինեն»,-** ասում է տնօրենը:



Ավելի քան տասը տարի մանկապարտեզ չունենալուց հետո բնակավայրի վարչական շենքի տարածքում արդեն գործում է Նորաբաց Նախակրթարանը: Համայնքների միավորման արդյունքում վարչական աշխատակազմը կրճատվեց, իսկ Նրանց զբաղեցրած տարածքը հատկացվեց փոքրիկներին:



Համայնքի բնակչուհի Ջերմինե Դավթյանը մանրամասն ներկայացնում է իր ծննդավայր Շամլուղի վերջին շրջանի ձեռքբերումները. կենտրոնական հրապարակը, որտեղ երեխաները սիրում են իրենց օրն անցկացնել, բարեկարգվել է, իրականացվել են փողոցների փոսային նորոգման, դեպի դպրոցի տանող ճանապարհի ասֆալտապատման, զբոսայգու վերանորոգման, փողոցային լուսավորության, կանգառների կառուցման աշխատանքներ:

Մարինե Ավաբերդյանը Շամլուղի Նախակրթարանի առաջին դաստիարակն է: Նա մեծ սիրով ու եռանդով է անում իր աշխատանքը:

«Երեխաների քանակը Շամլուղում միշտ շատ է եղել, բայց քանի որ տարածք չկար, չէին բացում Նախակրթարան: Խոշորացումից հետո առաջին լավ բանը, որ տեսանք, մանկապարտեզն էր»:





Սպարտակ Բեկջանյանը Նեղոցի Նախկին գյուղապետն է: Այժմ թոշակառու է և հետևում է գյուղում իրականացվող աշխատանքներին: Նախկինում գյուղը զազաֆիկացնելու իր ջանքերն ապարդյուն են եղել, իսկ այսօր դա արդեն իրականություն է:

«Գագ չի եղել, և հույս էլ չի եղել, որ կլինի: Բայց, փանջ Աստծո, միավորումից հետո գյուղում նկատելի շարժ կա»,- ասում է նա:

Էմմա Բեկջանյանն իր տուն մտած հյուրերին հյուրասիրում է իր բակում աճող արքայանարնջով:



Նեղոցի դպրոցի պահակ Դավիթ Բեկջանյանը երջանիկ է. գյուղի ճանապարհն ասֆալտապատել են:

«Երբ գյուղի ճանապարհը ասֆալտապատ է, քեզ մարդու նման ես զգում. զգում ես, որ քո խնդիրներով ղեկավարները մտահոգ են»:

Կորյուն Դավթայանն ու Արմեն Գրիգորյանը Նոյեմբերյանից են եկել Նեղոց՝ եռակցելու գյուղի զազատար խողովակները:

Ախթալա միավորված համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը հպարտորեն ներկայացնում է արված աշխատանքի արդյունքները.

«Միավորման արդյունքում ձևավորվում է մեկ ընդհանուր բյուջե, և արդեն կարողանում ենք միջոցներ հայթայթել ու համայնքը զարգացնել: Պետությունը մեզ ևս աջակցում է. տրամադրում է սուբվենցիաներ, որոնց շնորհիվ իրականացրել և իրականացնում ենք համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող տարբեր ծրագրեր: Ունեցել ենք խմելու ջրի մեծ խնդիր Մեծ Այրում և Փոքր Այրում բնակավայրերում, բայց այս պահին սուբվենցիոն ծրագրերով ներքին ցանց է կառուցվում, որի ավարտից հետո համայնքը շուրջօրյա կունենա խմելու ջուր»:

Զուգահեռ Սվինեց թաղամասում իրականացվում են փոսալցման աշխատանքներ:



Ախթալա համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը Սվինեց թաղամասի բնակիչների հետ քննարկում է առկա խնդիրները և փորձում ուղենշել դրանց լուծումները:



Ախթալայի համայնքապետարանում արդեն մեկ տարի է՝ գործում է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը (ՔՍԳ): Այն հիմնվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում՝ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների համաֆինանսավորմամբ:



Գրասենյակի միջոցով իրականացվում է հանրային ծառայությունների տրամադրումը՝ «մեկ պատուհան» սկզբունքով՝ բնակչի համար ապահովելով հարմարավետ և որակյալ սպասարկում: Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շնորհիվ էլ քաղաքացիները հնարավորություն ունեն ստանալ ծառայություններ անմիջապես իրենց բնակավայրում՝ առանց համայնքի կենտրոն այցելելու անհրաժեշտության:



«Մենք դիմում ենք մեր բնակավայրի օպերատորին, և այդ տեղեկանքային հարցերը տեղում լուծվում են, ու Ախթալայի գրասենյակ գնալու խնդիր չի առաջանում», - ասում է Շամլուղ բնակավայրից Հերմինեն:



«Համակարգի միջոցով կարողանում ենք կապ հաստատել համայնքի կենտրոնի հետ և միանգամից տեղեկանքները տրամադրել բնակիչներին: Այսպիսով, էլ կարիք չի լինում, որ բնակիչն այստեղից գնա, հասնի այնտեղ», - ասում է Մեծ Այրումի ՀԿՏՀ օպերատոր Իվետա Միրզոյանը:

«Մինչ գրասենյակի բացումը բնակիչներն անմիջապես ղեկավարին էին դիմում, իսկ հիմա այցելում են մեր գրասենյակ, և համապատասխան մասնագետներն իրենց հարցերին պատասխանում են: Իհարկե, եթե կարիք է լինում համայնքի ղեկավարին հանդիպելու, մենք դա ևս կազմակերպում ենք», - ասում է Անուշ Կիրակոսյանը, որը ՔՍԳ-ի առաջին կարգի մասնագետ է:





Ախթալա բնակավայրում կատարվել են փողոցների փոսալցման աշխատանքներ, զբոսայգու կառուցման, շենքերի հարակից տարածքների աստիճանների վերանորոգման, փողոցային լուսավորության անցկացման, կանգառների կառուցման աշխատանքներ:

Վերանորոգվում է թիվ 1 մանկապարտեզը:



Չամայնքում իրականացված դրական փոփոխությունները ոչ միայն նպաստում են համայնքի բարեկարգմանը, այլև զարգացմանը, քանի որ համայնքը զարգացնում են մարդիկ, իսկ տարբեր նպատակներով համայնքը լքած մարդիկ, այսօր տեսնելով հույս, որ իրենց բնակավայրը բարեկարգվում է, վերադառնում են հայրենի տուն՝ զարգացնելու այն:

Չերմինե Դավթյանը դիմացավ ժամանակավոր դժվարություններին, որովհետև վստահ էր, որ այս օրը գալու է, և այսօր էլ մեզ է վստահեցնում. **«Արդեն մարդիկ հետ են գալիս իրենց ընտանիքներ, մարդիկ, որ տարիներ առաջ թողել էին իրենց տունն ու ընտանիքը և մեկնել արտագնա աշխատանքի, այսօր հույս տեսնելով, որ կարող են աշխատել և իրենց տունը պահել՝ վերադառնում են»:**

«Մեծ հույսով ապրում ենք, որ մի օր մենք էլ խնդիր չենք ունենա, լավ ա, ջահելները մնում են գյուղում»,- ասում է Նեղոցի Նախկին գյուղապետ Սպարտակ Բեկջանյանը:

Չայրենիք սիրող մարդը պետք է զգա նաև հայրենիքի սերը, և նա անպայման կշենացնի իր բնակավայրը: Այսօր համայնքի բնակիչները վստահեցնում են, որ զգում են այդ սերը, ուրեմն Ախթալան դեռ նոր նվաճումներ կունենա:




Ամասիա

Շիրակի մարզի Ամասիա միավորված համայնքը գտնվում է մայրաքաղաք Երևանից 150 կմ հեռավորության վրա՝ Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Համայնքն իր մեջ ներառում է տասը բնակավայր՝ Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Կամխուտ, Ողջի, Բյուրակն, Մեղրաշատ, Հովտուն, Բանդիվան, Ջրաձոր: Համայնքը հարուստ է պատմական վայրերով և հնադարյան հուշակոթողներով, սակայն դրանք զբոսաշրջության զարգացմանը դեռ չեն ծառայում, քանի որ համայնքն ունի լուրջ ներդրումների ու բարենորոգումների կարիք:

Ամասիայի բնակլիմայական պայմանները նպաստավոր են զբոսաշրջության զարգացման համար. ձմեռը ձնառատ է՝ ամբողջությամբ պատված ձնածածկույթով, ամառը մեղմ է՝ շրջափակված կանաչ գոտիներով, իսկ ալպիական մարգագետիններն ու մաքուր, հագեցնող օդը գրավիչ են շատերի համար:

Համայնքի մշտական բնակչության թիվը մոտ 4300 է:



Ամասիայի՝ Եվրամիության և ՀՀ կառավարության համագործակցության արդյունքում բացված բրդի գործարանն է, որը լուծել է համայնքում բրդի սպառման, մասամբ՝ նաև աշխատատեղերի խնդիրը:





Անդրանիկ Թադևոսյանը բրդի գործարանի տնօրենն է:

«Այն բուրդը, որ թափում էինք, հիմա մթերում ենք, արդեն բավականին քանակությամբ մթերել ենք: Եվ նորից զարկ կտանք ոչխարապահությանը»:

Նախկինում, չունենալով այլընտրանք, գյուղացիները բուրդն այրում էին կամ թափում գետը: Բրդի գործարանը լուծել է նաև բնապահպանական կարևոր այս խնդիրը: Անդրանիկը վստահ է, որ կարճ ժամանակ անց նրանց կհաջողվի ունենալ տեղական որակյալ թելերի արտադրություն:



30 տարուց ավելի Ամասիայի արոտավայրերում ջրի լուրջ խնդիր է եղել: Կառավարության սուբվենցիոն ծրագրի շնորհիվ 2019 թվականի աշնանը ջրարբիացվեցին համայնքի արոտավայրերը, ինչն էապես կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

Համայնքի շատ բնակավայրերում բացվել են անասնաբուժական ժամանակակից կետեր, որտեղից գյուղացին կարող է ստանալ անհրաժեշտ բուժօգնություն կենդանու համար:



20 տարի անց համայնքը վերագինվեց նոր տեխնիկայով՝ հացահատիկային կոմբայն, տրակտոր, խոտի մամլիչ, կցորդիչով տրակտոր: Համայնքների միավորման արդյունքում ձեռք բերված տեխնիկան բնակիչների համար կենսական նշանակություն ունի:

ԱՄՆ միգազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ձեռք է բերվել հացահատիկային կոմբայն, տրակտոր և գյուղգործիչ՝ խոտի մամլիչ, տրակտոր կցորդիչով, նախատեսվում է նաև ձեռք բերել ինքնագնաց կոմբայն, սիլոսահավաք, շարքացան, կուլտիվատոր և գուլթան:

Բրդի հոսքագծերի և արհեստների զարգացման նախաձեռնությունը նպաստել է աշխատատեղերի բացմանը: Բրդի գործարանում աշխատում են համայնքի բնակավայրերի բնակիչները:

Գայանե Հարությունյանը աշխատում է բրդի նորաբաց գործարանում: Մանածագործի աշխատանքի շնորհիվ լուծվել է նրա աշխատանքի, հետևաբար՝ նաև սոցիալական խնդիրը:

«Կանայք հնարավորություն ունեցան տնից դուրս գալու, ունենալու աշխատանք և ապահովելու իրենց ընտանիքը իրենց վաստակած գումարով»,- ասում է Գայանեն:






Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների աջակցությամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Զարավային Կովկասում» ծրագրի միջոցով Ամասիայի համայնքապետարանում հիմնվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը: Ծրագրի աջակցությամբ գրասենյակը վերագինվել է տեխնիկայով, իրականացվել է աշխատակիցների վերապատրաստում:




Համայնքում ներդրված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով (ՀԿՏՀ), որի հիման վրա նաև գործում է համայնքապետարանի պաշտոնական կայքը, քաղաքացիները կարող են տեղեկանալ համայնքի նորություններին, ավագանու և համայնքապետի որոշումներին և դրանց նախագծերին, առցանց դիմումներ ուղարկել համայնքապետարան և հետևել դրանց ընթացքին, ծանոթանալ տրամադրվող ծառայություններին և դրանց ընթացակարգերին, առցանց հետևել ավագանու նիստերին, մասնակցել հանրային քննարկումներին և այլն:



Համայնքում գործում է ոչ ֆորմալ կրթության «Լեգո լաբ» կենտրոնը: Կենտրոնի աշակերտները միավորված համայնքի պատանի բնակիչներն են, որոնք սովորում են ռոբոտաշինություն հաճախելով տարբեր բնակավայրերից:

«Քանի որ Ամասիան ունի արհեստագործական ուսումնարան, որտեղ մասնագիտական ուսուցման հիմնական ուղղությունը տեղեկատվական տեխնոլոգիաներն են՝ համակարգիչների շահագործում, ծրագրավորում և այլն, այս լաբորատորիան հիմք է՝ կրթությունն ավելի լուրջ հարթակում շարունակելու»,- ասում է «Լեգո լաբ» հիմնադիր-խմբակավար Արսեն Յայլոյանը, ով ավարտել է Երևանի ճարտարագիտական համալսարանը և վերադարձել հայրենի համայնք՝ հիմնելու այս խմբակը և իր գիտելիքը փոխանցելու համայնքի երիտասարդությանը:



Երեխաներն այստեղ հասնելու խնդիր էլ չունեն, քանի որ համայնքապետարանը տրանսպորտ է տրամադրել տարբեր բնակավայրերի աշակերտներին «Լեգո լաբ» տեղափոխելու համար:

Բացի մասնագիտական գիտելիքից «Լեգո լաբը» նաև հնարավորություն է տալիս համայնքի բոլոր բնակավայրերի երեխաներին միմյանց հետ շփվելու:



«Այժմ ես կարող եմ շփվել նաև գյուղերի երեխաների հետ: Բոլորն էլ ուզում են այս ծրագրով ավելի խորը գիտելիք ստանալ»,- ասում է աշակերտուհի Նարինեն Ամասիայից:

«Լավ է, որ համայնքը խոշորացրել են, և ես կարող եմ գալ այստեղ և գիտելիք ստանալ»,- ասում է Մարինեն Գտաշեն բնակավայրից:



Հիմնանորոգվում է Հովտուն բնակավայրի տարրական դպրոցի շենքը, որը 30 տարի չէր վերանորոգվել: Ինչպես նշում է Ամասիա համայնքի ղեկավար Զեմմա Հարությունյանը, մոտ 1,5 մլն դրամ ներդրումն արվել է համայնքի բյուջեից:



2012 թ. բացված «Նանե» նախակրթարանը համայնքի միավորումից հետո հարակից բնակավայրերից էլ է երեխաներ ընդունում: 2019 թ. սեպտեմբերին բացվել է նաև կրտսերների՝ երրորդ խումբը, որի սաների հիմնական մասը հարակից բնակավայրերից են:

Շուշաննա Նիկոլյանը Արեգնադեմ բնակավայրից է իր երեխային բերում «Նանե» նախակրթարան: Նա նշում է, որ համայնքների միավորումը տվեց նոր աշխատատեղերի մեծ հնարավորություն, իսկ նախակրթարանի նոր խումբն անձամբ իրեն հնարավորություն տվեց ընդունելու ուսուցիչ աշխատելու առաջարկը:

Համայնքում արտաքին լուսավորության հարցը մեծապես լուծվել է: Տեղադրվել են հիմնականում էներգախնայող LED տեսակի էլեկտրական լամպեր: Վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքները, կատարվել են ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:



Ամասիա համայնքն ունի նաև հետաքրքիր առանձնահատկություն. գտնվելով երկրի ամենացուրտ՝ հյուսիսային հատվածում, ունի կին ղեկավար, որն իր ամուր ուսերի վրա տանում է համայնքի խնդիրների լուծման ու զարգացման բավականաչափ բարդ խնդիրը:




Ողջի բնակավայրի բնակիչ Վազգեն Պողոսյանն ուրախ է գյուղում բոլորն ապահոված են խմելու ջրով, իսկ արտաքին լուսավորության շնորհիվ երեկոներն արդեն այդքան մութ չեն թվում:

«Մինչև համայնքների միավորումը գյուղում չունեինք լուսավորություն, իսկ հիմա գյուղի 80%-ը լուսավորված է: Չունեինք խմելու ջրի հնարավորություն, հիմա ամբողջ գյուղը ջուր ունի: Նաև գերեզմաններն են ցանկապատել, որ անասուններն այնտեղ չմտնեն»,- ասում է նա:

«Համայնքների միավորումը բավականին առաջադիմական քայլ է, և հնարավորություն է տալիս յուրաքանչյուր բնակավայրում ինչ-որ առաջնային խնդիր լուծել: Բյուջեն հավաքվում է մի տեղում, ծախսվում է մի տեղից, և կարողանում ես յուրաքանչյուր բնակավայրի համար որևէ կարևորագույն հարց լուծել: Օրինակ, Ողջի համայնքը չունեի լուսավորություն, և եթե այն մնար որպես առանձին համայնք, երբեք այդքան գումար չէր ունենա այդ խնդիրը լուծելու համար»,- ասում է համայնքի ղեկավար Զեմմա Հարությունյանը:

Գորիս

Հայաստանի
Հանրապետության
մայրաքաղաք Երևանից մոտ
240 կմ հեռավորության վրա՝
բարձր ժայռերի, բրգաձև
գագաթների և խոր ձորերի
և կիրճերի արանքում,
տարածվում է անկրկնեղի
բնաշխարհով Գորիս
համայնքը: Այն ընդգրկում
է Գորիս, Ակներ,
Աղբուլաղ, Բարձրավան,
Խնձորեսկ, Հարթաշեն,
Չորակ, Ներքին Խնձորեսկ,
Շուռնուխ, Որոտան, Վանանդ,
Վերիշեն և Քարահունջ
բնակավայրերը: Համայնքի մշտական
բնակչությունը մոտ 28350 է:
Իր ճարտարապետությամբ և առանձնահատուկ
շինարարական ավանդույթներով Գորիսն
այսօր արդեն միավորված համայնքի համաչափ
զարգացման հիանալի օրինակ է:



Հին Գորիս թաղամասն է: Ճանապարհի
հարթեցման աշխատանքներ են տարվում:

Հին Գորիսի բնակիչները պատմում են.
«Տարիներ շարունակ երազել ենք նման
տեխնիկայի և թեկուզ ոչ ասֆալտապատ, բայց
հարթ ճանապարհների մասին»: Այսօր նրանց
երազանքն իրականություն է:

Հին Գորիս թաղամասում նախկինում առկա էր
հսկայական աղբավայր, որն այսօր վերացվել է:
Նոր ձեռք բերված տեխնիկայով իրականացվում է
աղբահանություն:

Գորիս համայնքի Ակներ
բնակավայր տանող
ներթաղամասային
փողոցի մի հատվածի
անբարեկարգության
և փոսերի պատճառով
հատկապես ծմռան
ամիսներին միջհամայնքային
ճանապարհն անանցանելի
էր դառնում: Բեռնատար
մեքենաները ժամերով մնում
էին խցանման մեջ: Այսօր այդ
հատվածը ասֆալտապատվում է:
Ակներ տանող ներթաղամասային
փողոցի մի հատվածի
ասֆալտապատման և Գորիս
բնակավայրի մի քանի փողոցների
փոսային նորոգման աշխատանքների
համար ծախսվել է շուրջ 42 մլն ՀՀ
դրամ:





Գորիսի բնակիչ Հրաչիկ Պետրոսյանը երկար տարիներ աշխատում է մեքենավար: Այսօր նա մասնակցում է ասֆալտապատման աշխատանքներին և խոստովանում, որ մեծ սիրով է անում աշխատանքը.

«Վաղուց համայնքում նման ասֆալտապատման աշխատանքներ չէին կատարվել: Հիմա լավ է, աշխատանք ունենք ու անում ենք կարևոր գործ մեր ժողովրդի համար»,- ասում է Հրաչիկը:

«Այ, կտեսնեք, մեր գյուղը առանձնահատուկ գյուղ է, տուրիստներն էլ շատ բան կտանեն էստեղից»:



Վերիշեն բնակավայրում ակտիվ ընթանում են Արվեստների կենտրոնի հիմնանորոգման և հարակից այգու բարեկարգման աշխատանքները:

«Երբ համայնքում կա շինարարություն, ուրեմն բանվորի ու շինարարի համար կա գործ, սիրված աշխատանք, որով կարող է նաև ընտանիքի հոգսերը հոգալ: Իսկ սա մեր համայնքի պարագայում մեծ ձեռքբերում է»,- ասում է վերիշենցի Ավրորա Բալայանը:

Նա ներկայացնում է իր բնակավայրը որպես արհեստավորների բնակավայր, որտեղ բոլորը վարպետ են: Նա վստահ է, որ Արվեստի կենտրոնը իրենց բնակավայրն գրավիչ կդարձնի մեծ թվով զբոսաշրջիկների համար: Իսկ առայժմ աչալրջորեն հետևում է գյուղում ընթացող բարեկարգման աշխատանքներին:

Նարեկ Օրդյանը քանդակագործ է՝ քանդակագործի ընտանիքից, այսօր՝ նաև Գորիսի ավագանու 15 անդամներից մեկը: Պատմում է, թե որքան արագ են իրենց բնակավայրի՝ Վերիշենի խնդիրները լուծվում:

«Այս ամենը համայնքների միավորման արդյունքում եղավ. հիմա փոքր բնակավայրերն ակնհայտորեն շահում են, և հնարավոր է լինում կենտրոնացված բյուջեն ըստ անհրաժեշտության և հավասարաչափ բաշխել»,- ասում է Նարեկը:



Համայնքների միավորման արդյունքում, սուբվենցիոն ծրագրերի միջոցով էլ Քարահունջում բացվեց գրադարան, որտեղ ստեղծված են ընթերցանության, շփման և ինքնագարգացման համար բոլոր անհրաժեշտ հարմարությունները. շատ կարևոր նախաձեռնությունն իրենց ապագան հայրենի գյուղի հետ կապող երիտասարդների համար:



Խնձորեսկը մարզկենտրոնից հեռու է 82 կմ: Խնձորեսկի պատմությունը հին է և հարուստ: Հին են նաև ենթակառուցվածքներն ու ճանապարհները, բայց արդեն նոր է կենտրոնական հրապարակը, որ ևս բարեկարգվել է կառավարության սուբվենցիոն ծրագրով:

«Սա Խնձորեսկի կենտրոնն է, և եթե այստեղ արդեն մաքուր է ու բարեկարգ, ուրեմն շուտով Խնձորեսկում կլուծվեն նաև մյուս խնդիրները»,- վստահեցնում են խնձորեսկցիները:



Այսօր կենտրոնական հրապարակն ու այգին նրանց ամենասիրելի վայրն է դարձել: Շատ հետաքրքիր է մտածված, որ Գորիս համայնքի Խնձորեսկ բնակավայրի վարչական ղեկավարի Նստավայրը հենց այս հրապարակում է՝ խնձորեսկցիների սիրելի վայրում: Խնձորեսկ բնակավայրում կենտրոնական հրապարակի վերանորոգման, հարակից տարածքների ու բնակավայր մտնող հիմնական ճանապարհի ասֆալտապատման վրա ծախսվել է շուրջ 24 մլն ՀՀ դրամ:

Վարսահարդար Լիլիթ Սայունցը հաճախ է օրն անցկացնում այս հրապարակում, սիրում է զբոսնել բարեկարգ այգում: Նա երկար թվարկում է Խնձորեսկում վերջին շրջանում արված բարեփոխումները:

«Վերանորոգվել է կենտրոնական հրապարակը, ասֆալտապատվել են հարակից տարածքներն ու բնակավայր բերող հիմնական ճանապարհը: Ժամանակին է կատարվում աղբահանությունը, իսկ առաջ մարդիկ աղբը թափում էին, ուր պատահեք: Լուսավորության հարցն են լուծել»:

Լիլիթը վստահ է, որ շուտով իրենք ընդհանրապես որևէ խնդիր չեն ունենա:

Փոքրիկ Արտյոմը Լիլիթին հերթ չի տալիս, նա պատմում է իրենց բնակավայրում իրականացված բարեփոխումների մասին այնպիսի ոգևորությամբ, որով այդ տարիքի փոքրիկները խոսում են իրենց խաղերի, բակում, ընկերների շրջանում ունեցած հաջողությունների մասին:

Պատմում է մեծի նման, մեծի բառապաշարով: Նրան անվանում են Խնձորեսկի ապագա գյուղապետ, քանի որ մեկ առ մեկ գիտի գյուղի բնակիչներին, նրանց տներն ու հասցեները: Արտյոմը խոստովանում է.

«Ձորի մեջի ճանապարհը մութ ա եղել, բայց հիմա լուսավորվել ա, արդեն չեմ վախենում երեկոյան տնից դուրս գալ, իրիկուններն էլ մութ չի լինում»:



Վարդիթեր Արզանյանին ամենից շատ հուզում է խմելու ջրի հարցը: Այսօր նա արդեն հույս ունի, որ հարցը կլուծվի:



Գորիս համայնքն իրականացնում է Խնձորեսկի կապտաժների կառուցումը՝ 40 մլն դրամ արժողությամբ: Նման ծրագրեր իրականացվելու են նաև համայնքի մյուս բնակավայրերում:





Գորիս համայնքի ինը բնակավայրերից յոթում վարչատարածքային բարեփոխումներից հետո կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանությունը:

Գորիսի Կարեն Աղաջանյանը գոհ է հայրենի քաղաքում իրականացվող ամենօրյա աղբահանությունից.

«Միավորման արդյունքում մեծ փոփոխություններ են տեղի ունեցել: Աղբամաններ են տեղադրվել: Դրսում էլ աղբ ընդհանրապես չի մնում»:



Գորիսի բարեկարգված կենտրոնական հրապարակն է՝ գորիսեցիների ամենասիրելի վայրը:

Գորիսում ակտիվորեն ընթանում է շինարարությունը, բացվում է երկրորդ սպորտդպրոցը, իրականացվում են դահլիճի նորոգման աշխատանքները:



Իրականացվում են Գորիսի դիտակետի և հարակից տարածքի ճանապարհի վերակառուցման աշխատանքները, ակտիվ ընթացքի մեջ են նաև ասֆալտապատումն ու համայնքի բարեկարգումը:

Դրանք իրականացվում են ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով. տարբեր ռեսուրսների ներգրավմամբ, ամբողջ համայնքում 2019 թ. աշնանն իրականացվող շինարարությունների ծավալը կազմում է 1.5 միլիարդ ՀՀ դրամ, տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների հետ համատեղ ծրագրերի բյուջեն 2 միլիարդից ավելի է, իսկ բիզնես սեկտորի ներդրումների ծավալը՝ 9,6 միլիարդ. դրանք համայնքում նոր աշխատատեղերի հնարավորություն են ստեղծում:

Համայնքը ներդրումներ է իրականացնում, վերակառուցում տարիներով անուշադրության մատնված զբոսաշրջային ենթակառուցվածքները, վերադարձնելով երբեմնի գրավչությունը, ներդրումների համար դրանք դարձնելով մրցակցային: Հանրային վայրերի վերակառուցման շնորհիվ սոցիալական շփումների հնարավորություններն են մեծանում համայնքում:





Զգալի ներդրումներ են իրականացվում տնտեսական և ռազմավարական նշանակության ճանապարհների բարելավման ուղղությամբ: Համայնքը կառուցվում է՝ խթանելով տնտեսական աշխուժությունը: Ոչ միայն Գորիսում, այլև համայնքի բնակավայրերում լուրջ ներդրումներ են իրականացվում համաչափ զարգացման նպատակով, բոլոր բնակավայրերում խմելու ջրի, ոռոգման, արոտավայրերի բարելավման խնդիրները, լուսավորության, աղբահանության հարցերն արագընթաց տեմպերով լուծվում են:

Այժմ համայնքն աշխատում է բնակավայրերի բրենդավորման ուղղությամբ՝ նպատակ ունենալով վերհանել տնտեսության զարգացման պոտենցիալը և ներդրումների միջոցով իրականացնել երկարաժամկետ արդյունք ապահովող զարգացման ծրագրեր:

Գորիսում կառուցվել և վերանորոգվել են կանգառները, որոնք ինքնատիպ հմայք են հաղորդում համայնքին:



Գորիս քաղաքի լուսավորության ցանցն ունի 1556 լուսատու: Էներգատար լուսատուները փոխարինվել են ժամանակակից, էներգաարդյունավետ և ավելի երկարակյաց լուսատուներով: Բացի այդ լուծվել է համայնքի գյուղերի գիշերային լուսավորության հարցը. բնակավայրերի 95%-ը զինվել է լուսավորությամբ:




Գորիսն օրեցօր ավելի գրավիչ է դառնում զբոսաշրջիկների համար:



Գորիսի բարեկարգված զբոսայգին ժամանցի ամենագեղեցիկ վայրերից է:





Միավորված Գորիս համայնքում արդեն տասը տարի է՝ գործում է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը հիմնվել է ԳՄՅԸ աջակցությամբ:

Աննա Դավթյանը, Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ավագ մասնագետը, պատմում է.

«Մարդիկ վաղուց սովորել են իրենց հարցերը լուծել ոչ թե Գորիս հասնելու, այլ իրենց բնակավայրերի օպերատորների միջոցով: Վերջիններս, ԳՄՅԸ աջակցությամբ վերապատրաստվելով, այսօր մեծ արդյունավետություն են ապահովում քաղաքացիների հետ ամենօրյա աշխատանքում»:

Գորիսի համայնքապետարանն ունի նաև թեժ գիծ, որն օրվա ընթացքում իսկապես «թեժ» է լինում, բայց **«խնդիրներն արագ գտնում են իրենց պատասխանները»:**



Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը հպարտ է, որ կարողանում է արդարացնել բնակիչների հույսերը.

«Այս ծրագրերի իրականացումը նաև ինձ թույլ տվեց պարզերես դուրս գալ իմ ընտրողների առաջ: Ես անում էի ու կանեի իմ աշխատանքը, բայց միավորման արդյունքում ավելի արդյունավետ ու արագ ստացվեցին բարեփոխումները»:

Խոշորացված համայնքի համաչափ զարգացման տեմպերը, ձեռքբերումները, արդյունավետ վարչարարությունը, բնակավայրերի զարգացման և ներդրումային ծրագրերի արդյունքներն օրինակելի են համարվել հանրապետության մասշտաբով: Այդ մասին է վկայում նաև «Լավագույն համայնք 2019» մրցույթում տարած հաղթանակը, որով Գորիսը ճանաչվեց ՀՀ լավագույն համայնք:



Լոռի Բերդ

Լոռին տարածքի մեծությամբ երրորդ մարզն է Հայաստանի Հանրապետությունում, իսկ բնակչության թվով առաջինը: Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանին: Լոռի Բերդը Ստեփանավանի տարածաշրջանի միավորված համայնքներից մեկն է: Այն ներառում է Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ բնակավայրերը: Համայնքի կենտրոնը Լոռի Բերդն է: Համայնքի բնակչության ընդհանուր թիվը 4818 է:



Մեքենավար-տրակտորիստ Ռոման Մկրտումյանը Լոռի Բերդի համայնքապետարանի ձեռք բերած Նոր տեխնիկայով ընդամենը 2 ժամում վարեց իր համագյուղացի Սահակ Ավետյանի 6000 ք/մ հողատարածքը: 48 տարի շարունակ հին տեխնիկայով աշխատած Ռոման Սերգեյևիչը երջանիկ է:

«Վերջապես Նոր տեխնիկա ենք ստացել: Աստծուց էր: Հաճույք է այս տեխնիկայով աշխատել»,- փայլող աչքերով և բարձր տրամադրությամբ ասում է նա:

Երբեք գործն անավարտ չի թողնում, մինչև անգամ, եթե հարկ լինի, ուշ գիշերին է ավարտում գործն ու հոգնած, բայց բավարարված իր աշխատանքից՝ վերադառնում տուն:

«Բա մարդ ա, փող ա տալիս ու գիտի, որ պիտի էսօր հողը մշակված լինի, ես ինչի՞ թողնեմ, մի հատ էլ վաղը էդքան ճամփա կտրեմ, գամ, շարունակեմ, հենա կավարտեմ ու հանգիստ խղճով կգնամ տուն»,- ասում է գրեթե կես դար մեքենավարությամբ և գյուղատնտեսությամբ զբաղվող Ռոման Սերգեյևիչը:

Սահակ Ավետյանը, հանգիստ նստած, հետևում է, թե ինչպես է Ռոման Սերգեյևիչը վարում իր հողը: Իսկ նախկինում ինքն էր հասնում մարզկենտրոն, վառելիք ձեռք բերում, եթե չէր բավականացնում՝ գործը կիսատ թողած՝ Նորից էր գնում վառելիքի հետևից:

«Վայն եկավ, տարավ, եթե հանկարծ գործի պահին տեխնիկան փչանար. ստիպված թողնում էի ամեն ինչ ու սկսում վարպետ, սարքավորում ու միջոց փնտրել սարքելու համար»:





Նոր ձեռք բերված տեխնիկան իրականացնում է հողի մշակման ամբողջական ցիկլը՝ 7 գործողություն՝ վար-ցան, պարարտանյութի ցրում, մոլախոտի դեմ պայքար, կուլտիվացիա, տոփանում, դիսկավորում, հունձ:

Համայնքների միավորումից հետո տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և սուբվենցիոն ծրագրերով ձեռք բերված տեխնիկան հնարավորություն տվեց Լեջան բնակավայրի բնակիչ Կարեն Պողոսյանին ազատ ժամանակը զուր չվատնել:

«Պարապ չեմ մնում, աշխատում եմ, ու իմ հալալ քրտինքով ընտանիքիս հոգսերը կարողանում եմ հոգալ»:

Նա այսօր Նոր շարքացանի օգնությամբ հացահատիկ է ցանում: Հենց սրանից է սկսվում հացի խնդրի լուծումը:

Նոր տեխնիկան հեշտացրել է գյուղացիների աշխատանքը: Ավելին, համայնքն օգնում է հարակից՝ Ստեփանավան համայնքին՝ հողի մշակումն արագ ու արդյունավետ ավարտելու գործում:

Լուսանկարներում՝ հողի մշակումը Ստեփանավանում:



Լոռի Բերդի համայնքապետի տեղակալ Էդուարդ Մելիքսեթյանն է. հպարտորեն հետևում է Նոր տեխնիկայի անխափան աշխատանքին:


«Չմշակված 850 հեկտարից արդեն մոտ 250-ը մշակվել է»,- ասում է նա ու ընդգծում, որ համայնքների միավորման արդյունքներից մեկն էլ գործազրկության նվազումն է:

«Մարդիկ արդեն հույս են տեսնում, որ կարող են մշակել իրենց հողն, ունենալ եկամուտ ու մնալ ընտանիքի հետ, ոչ թե մեկնել արտազևա աշխատանքի»:

Էդուարդ Մելիքսեթյանը միշտ գյուղացու, համայնքի բնակիչ կոռքին է, իսկ համայնքապետարանն աշխատում է, ինչպես հարկն է: Էլեկտրոնային համակարգի միջոցով գյուղացիները կարող են նախապես առցանց գրանցվել տեխնիկայի վարձակալության համար, այնուհետև՝ համայնքապետարանում կատարել անհրաժեշտ վճարումը:



Լոռի Բերդ համայնքի բոլոր բնակավայրերում ԳՄՀԸ աջակցությամբ ներդրվել և կիրառվում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը, որը թույլ է տալիս ծառայություններ մատուցել բնակիչներին անմիջապես իրենց բնակավայրերում և բացառել համայնքի կենտրոն հասնելու անհրաժեշտությունը: Իրականացվել են նաև աշխատակիցների վերապատրաստումներ՝ համայնքի բնակիչներին մատուցելու բարձրակարգ ծառայություններ:





Սվերդլովի բնակիչ Կարինե Սարգսյանը հույս ունի, որ վերջապես ուշադրություն կդարձվի ներհամայնքային ճանապարհների բարեկարգմանը:

«Ճատ գործ է արվել, բայց էս քարուքանդ ճանապարհները եթե չվերանորոգվեն, միջհամայնքային ու ներհամայնքային ճանապարհային կապը շատ դժվար կլինի ապահովել», - իր մտահոգությունն է կիսում Կարինե Սարգսյանը:



Լուռի Բերդը հայտնի է իր քաղցրահամ խնձորներով: Բնակավայրի փոքրիկ բնակիչներն առավտոր սկսում են խնձոր ուտելով:

Համայնքի Ազարակ բնակավայրում սուբվենցիոն ծրագրով վերանորոգվում է նաև մշակույթի տունը, որն ունենալու է հանդիսությունների սրահ, մարզադահլիճ, երեխաների համար նախատեսված տարբեր խմբակներ:

«Պայմանավորվածություն կա, որ համայնքի բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացնեն համայնքի բնակիչները, սրանով որոշակիորեն լուծում ենք համայնքում աշխատատեղերի հարցը՝ նպաստելով սոցիալական կայունությանը», - խոստովանում է համայնքապետի տեղակալ Էդուարդ Մելիքսեթյանը:



Գառնիկ Ասուլյանը Լուռի Բերդի բնակիչ է, որը մասնակցում է Լեջան բնակավայրի ջրագծի շինարարական և վերանորոգման աշխատանքներին:

«Ուրախ եմ, որ ինչ-որ բանով օգտակար եմ լինում համագյուղացիներին ու համայնքին», - ասում է Գառնիկը ու խորը շունչ քաշելով շարունակում աշխատել:



Լուռի Բերդը համայնքի Սվերդլով բնակավայրի վերանորոգվող շենքն է, որը գյուղի բնակիչների համար կդառնա հանդիսությունների սրահ:





Վերջապես բարեկարգվել է պատմական Լոռի Բերդ ամրոց տանող ճանապարհը: Համայնքապետարանում սա որոշակի քայլ են համարում համայնքում մշակութային կյանքն աշխուժացնելու և զբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Տարեցտարի ավելանում է հազարամյա ամրոցը տեսնելու ցանկություն ունեցող այցելուների թիվը՝ հասնելով տարեկան 17 հազարի:



Լոռի Բերդ համայնքի ղեկավարի օգնական Խաչիկ Բալայանն ուրախ է, երբ խոսում է գյուղացիների ոգևորության և աշխատասիրության մասին:

«Նախորդ տարի համայնքի բնակիչների ջանքերով մշակվել է 150 հեկտար հող, իսկ մյուս տարի պլանավորում են կրկնապատկել արդյունքը», - նշում է նա համայնքի բնակիչների ոգևորության ցուցանիշը:



Սուբվենցիոն ծրագրով Լոռի Բերդի համայնքապետարանը հակակարկտային կայան է ձեռք բերել, որով էականորեն աջակցել է գյուղացուն բերքը կարկուտից պաշտպանելու հարցում:



Ագարակ բնակավայրից Խաթան պապը սիրում է կարդալ, կարդում է՝ ինչ պատահի:

«Համայնքների միավորման արդյունքում Լոռի բերդ համայնքում լուծվում են աղբահանության, գիշերային լուսավորության, ճանապարհների վերանորոգման խնդիրները, ինչը նախկինում, ապակենտրոնացված, փոքր բյուջեներով հնարավոր չէր իրականացնել», - ասում է Էդուարդ Մելիքսեթյանը:

Մեղրի

ՀՀ Սյունիքի մարզում՝ Երևանից 380 կմ հարավ Զանգեզուրի լեռնաշղթայի հարավում՝ Իրանի սահմանին մոտ տարածվում է Հայաստանի ամենաջերմ ու արևոտ համայնքը՝ Մեղրին՝ Հայաստանի հարավային դարպասը: Մեղրին նախկինում անվանել են Արևիք գավառ, այսինքն՝ «արևոտ տեղ»:

Մեղրի համայնքը ներառում է Մեղրի, Ագարակ, Ալվանք, Այգեձոր, Գուլեմնիս, Թխկուտ, Լեկվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն բնակավայրերը: Մեղրի համայնքը բնութագրվում է բարդ ռելիեֆով, խիստ կտրտվածությամբ և մասնատվածությամբ: Այդ պատճառով կլիման բազմազան է՝ չոր մերձարևադարձայինից՝ մեղմ ձմեռներով և շոգ ամառներով, մինչև բարձր լեռնային ցուրտ կլիմա: Գերակշռող բարեխառն ցամաքային կլիման է:

Բավականաչափ աշխատանք է տարվել ճանապարհների բարեկարգման ուղղությամբ, հիմնականում ճանապարհներն ասֆալտապատ են:



«Ճանապարհաշինության լուրջ ծրագրեր իրականացվեցին. օրինակ՝ Մեղրիում կառուցեցինք այլընտրանքային ճանապարհ՝ բեռնաթափելով Մեղրիի կամուրջը: Տարիներ շարունակ ծեծվող խնդիր էր, որ վերջերս լուծում ստացավ», - պատմում է Ազատ Գասպարյանը:

Նա 1996 թվականից Մեղրու ճանապարհաշինարարության և շահագործման ձեռնարկության գործադիր տնօրենն է: Ունի բազմաթիվ պատվոգրեր և շնորհակալագրեր, բայց ամենաթանկն իր համար «Մեղրու պատվավոր քաղաքացի» կոչումն է: Ծնունդով ապարանցի Ազատ Գասպարյանի համար Մեղրին շատ հարազատ բնակավայր է: Ինչպես ինքն է ասում. «Ես սիրեցի Մեղրին, Մեղրին էլ սիրեց ինձ»: Արդեն 36 տարի ապրում է Մեղրիում և հասցրել է շահել բոլոր մեդալների սերն ու հարգանքը: Նրա ղեկավարությամբ կառուցվել են Մեղրիի գլխավոր ճանապարհները, քաղաքի տրակառույց հիվանդանոցը և այլն:

Դեպի Մեղրի տանող ճանապարհը տարիներ շարունակ չէր նորոգվել, այսօր այն բարեկարգվում ու ասֆալտապատվում է:





Համայնքի միավորումից հետո ներդրվեց ճանապարհային սպասարկման համակարգը, որի շնորհիվ ձեռք բերվեցին էքսկավատորներ և ինքնաթափ քարամաքրման և ձևամաքրման աշխատանքների համար:



Համայնքի միավորման արդյունքում ներդրվեց նաև տրանսպորտային նոր համակարգ, որի միջոցով համայնքի բոլոր բնակավայրերում աշխատում է կանոնավոր երթուղի: Բնակիչների խոսքերով՝ ձեռք բերված երեք նոր միկրոավտոբուսները շատ հարմար են, իսկ սպասարկումը՝ մատչելի:

«Փաստացի, ներհամայնքային ինտեգրացիայի հարցը լուծվել է. օրական երկու անգամ երաշխավորված տրանսպորտային կապ ունեն բոլոր գյուղերը», - ասում է Մեղրու համայնքապետ Մխիթար Զաքարյանը:



43 տարի վարորդ աշխատող Ստյոպա Խաչատրյանը նոր գնված միկրոավտոբուսներից մեկի վարորդն է: Պատմում է, որ նախկինում թոշակառուները գրկված էին ակտիվ տեղաշարժի հնարավորությունից:

«Կարող ա մի անգամ գնար մարզկենտրոն, էլ երկրորդ անգամ չէր գնում: Բայց հիմա շարժը կա, դասատուները գնում են գյուղեր, դաս են տալիս, հետ են գալիս», - պատմում է վարորդ Ստյոպան:



Ճանապարհների բարեկարգումից և տրանսպորտային խնդրի որոշակի թեթևացումից հետո հերթը կանգառներինն էր: Այսօր արդեն այսպիսի բարեկարգ կանգառներ կարելի է հանդիպել համայնքի ողջ տարածքում: Համայնքի միավորումից հետո կառուցվեց 11 կանգառ: Օրինակ, Ագարակ քաղաքի կանգառները տարբերվում են իրենց ոճով ու կառուցվածքով:




Մեղրիի մաքսակետի ամենաբանուկ հատվածում կառուցվում է նոր, վճարովի ավտոկայանատեղի: Գումարը կգնա համայնքային բյուջե, իսկ երկրի մասին դրական տպավորությունները՝ զբոսաշրջիկներին:



Մեղրի համայնքում նախատեսվում է հիմնել ևս երկու նմանատիպ կայանատեղի՝ հարակից վաճառքի տաղավարներով (ագրոշուկաներ) և սանհանգույցով, որոնցից մեկը՝ համայնքի ամենաբանուկ մասում՝ մաքսակետի հարակից տարածքում, իսկ մյուսը՝ Մեղրի քաղաքում՝ մաքսակետից 11 կմ հեռավորության վրա և միջպետական ճանապարհի հարևանությամբ: Կայանատեղիների հիմնումը միտում ունի լուծելու միջպետական ճանապարհի թողունակության բարձրացման, երթևեկելի հատվածների ծանրաբեռնվածության նվազեցման և կայանումների կանոնակարգման խնդիրները:

Մեղրիի մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Մեղրիի վերանորոգվող մանկապարտեզի կողքին կառուցվում է նաև քաղաքային նոր զբոսայգի, որտեղ իրենց հանգիստը կանցկացնեն մեղրեցիները:



Իսկ Մեղրի համայնքում շարունակվում են շինարարական աշխատանքները:



Համայնքի միավորումից հետո սուբվենցիոն ծրագրով նաև լուծվեց համայնքում աղբահանության խնդիրը: Համայնքապետարանը ձեռք բերեց երեք աղբատար մեքենա և 250 աղբաման՝ սպասարկելու համայնքի 15 բնակավայրերը:



Մեղրիում գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակը 2017 թվականից համայնքի բնակիչներին մատուցում է տարբեր ծառայություններ և ապահովում համայնքապետարանի և քաղաքացու միջև դյուրին կապ: Գրասենյակը հիմնվել է ԳՄՅԸ կողմից՝ Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների աջակցությամբ:

Համայնքի միավորումից անմիջապես հետո համայնքային միջոցներով վերակառուցվեց համայնքապետարանի 4-րդ հարկը:



Լիանա Սարգսյանը Մեղրիի ՔՍԳ-ի օպերատոր է. նա օգնում է համայնքի բնակիչներին դիմումների, գրությունների, տեղեկանքների և հարցերի դեպքում: Իսկ եթե բնակիչը համայնքի կենտրոնից հեռու է ապրում, ապա հարցը լուծվում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ համայնքի բնակավայրի օպերատորի աջակցությամբ կամ առցանց:

«Էն ծառայությունները, որ մատուցվում են Մեղրի քաղաքում, մատուցվում են հավասար հիմունքներով նաև գյուղական բնակավայրերում»,- վստահեցնում է Լիանան:

Համայնքի բոլոր բնակավայրերում ներդրվել է էներգախնայող լուսավորության ցանց, ինչի շնորհիվ կյանքը շարունակվում է նաև մութն ընկնելուց հետո՝ հատկապես գյուղական բնակավայրերում:



Ազարակի նորակառույց խաղահրապարակում երեխաների հոսքը չի դադարում օրվա որևէ ժամի:



Շվանիձորը և Ալվանքը համայնքի ամենամաքուր բնակավայրերից են: Շվանիձորում միավորումից հետո առաջին գործը, որ արվեց, Պ աղբավայրերի մաքրումն ու աղբամանների տեղադրումն էր:

«Սկսեցինք մաքրությունից, որ հետո արվող բարեփոխումները տեսանելի լինեին»,- ասում է երկու բնակավայրերի վարչական ղեկավար Ալիկ Թումանյանը:



Շվանիձորում կառուցվեց նոր և հարմարավետ կանգառ, ներդրվեց արտաքին լուսավորության ցանց՝ 42 կետով, որից 20-ը LED լուսարձակներ են:

«Մինչև լուսաբաց լույսերը չեն անջատվում, ինչի շնորհիվ գյուղը, կարծես, միշտ արթուն է: Որպես սահմանապահ գյուղ՝ սա շատ կարևոր է»,- ասում է Ալիկ Թումանյանը:

Բացվեց նոր երթուղի՝ հնարավորություն ընձեռելով Ալվանքի բնակիչներին օգտվելու և տրանսպորտից, և նոր կանգառից: Գյուղի տարբեր մասերում տեղադրվել են նաև նոր նստարաններ:





Շինարարական այս քարակույտերի փոխարեն Շվանիձորի միջնակարգ դպրոցի կողքին երեխաները կունենան բասկետբոլի խաղադաշտ:

Շվանիձորի այս ջրավազանը ոռոգում է շուրջ 20 հա հողատարածք:



Շվանիձոր և Ալվանք բնակավայրերի վարչական ղեկավար Ալիկ Թումանյանն է:

Հպարտությամբ է խոսում իր ղեկավարած բնակավայրերում բարեփոխումների մասին, որոնց շնորհիվ բնակիչների կյանքի որակը բարելավվել է:

«Վերանորոգեցինք մեր բնակավայրի երկու ջրավազանները՝ մեկը նորոգեցինք, մյուսը հիմնանորոգեցինք, որովհետև վերջին անգամ այն նորոգվել էր 1942 թվականին. հիմա այդ երկու ջրավազանները բավարար են մինչև 20 հեկտար հողատարածք ոռոգելու համար»:

Նման ջրավազանները մեծապես օգնում են բերքատվությանը, ինչի շնորհիվ բարձրանում է նաև բերքի որակը:

Միլիտոն Առաքելյանի այգում բերքահավաք է. բերքն առատ է շնորհիվ նորոգված ջրավազանների, որոնք լուծել են բնակավայրի ոռոգման ջրի հարցը:

«Էն ժամանակ Արաքսից էինք ջուր վերցնում, էն էլ առնում էինք, ամիսներ էր տևում, հիմա տասն օրը մեկ ջուր ենք ունենում, փանջ Աստծո»:



Մեղրի համայնքում ընդհանրապես առատ բերք եղավ հենց այս կարևոր խնդրի լուծման՝ ջրավազանների կառուցման շնորհիվ: Համայնքի ամենահայտնի մրգերից արքայանարինջն այստեղ ամենուր է:

Մեղրի համայնքի ամենահեռավոր բնակավայրը՝ Նռնաձորը, ևս համայնքային ղեկավարության ուշադրության ներքո է. արդեն ունի նոր ու հարմարավետ կանգառ, ամբողջ գյուղը լուսավորված է LED լույսերով և, ամենագլխավորը, բնակիչներն ունեն խմելու ջրի ավազան:



Չիթջյանները Նոնաձորի առաջին բնակիչներից են, որոնք 1990-ականներին գաղթել էին Գետաշենից: Այսօր նրանք զբաղվում են այգեգործությամբ, մեծացնում իրենց երեխաներին ու զարգացնում բնակավայրը. պատասխանատու գործ է: Մինչև հիմա հույսն իրենց սեփական ուժերի վրա էր, շատ բան էլ չէին կարողանում անել: Այսօր արդեն համայնքի ղեկավարությունը, Կառավարությունը, պետությունը ձեռք են մեկնում:



«Վերջապես լուծվել է գյուղի խմելու ջրի հարցը, տրանսպորտի ու լուսավորության խնդիրը: Նախկինում, եթե մի բան էր պետք լինում, մի խնդիր էր պետք լինում լուծել, գնում, մարզկենտրոն էինք հասնում, էն էլ տաքսիով. 8000 դրամ տալիս՝ գնում էինք, 8000 տալիս՝ գալիս:

Ջիմա էդ ավտոբուսը, որ տվել են գյուղին, 200 դրամով տանում ա, 200 դրամով՝ բերում»,- կառավարության սուբվենցիոն ծրագրով հատկացված միջոցներով գնված երթուղայինների մասին է ոգևորված պատմում ընտանիքի հայրը՝ Վաչիկ Չիթջյանը:

Գեորգի Մկրտչյանը կամ, ինչպես մեղրեցիներն են ասում, Ժորա պապն արդեն 8 տարի է, ինչ ապրում է Մեղրիում: Սանկտ Պետերբուրգից վերադարձել է իր ծննդավայր և ի կատար ածել վաղեմի երազանքը. մեծ այգի ու տուն է կառուցել: Այսօր Արաքսաշեն տանող ճանապարհը հայտնի է շատ շատերին. իր մոտ են գալիս՝ վայելելու հյութալի նուռն ու բնության հրաշալի տեսարանը:



Վարդանիձոր գյուղում 2019 թ. սեպտեմբերին բացվեց Նորակառույց մանկապարտեզը: Այստեղ հաճախում է 19 երեխա՝ Վարդանիձորից և Նույնիսկ Մեղրի բնակավայրից: Բնակավայրում գործում է նաև «Արևիկ» արվեստի դպրոցը:

«Երեխաների նախադպրոցական և արտադպրոցական կրթությունը շատ կարևոր է բնակավայրի զարգացման տեսանկյունից. գյուղի բնակչությունը չի տեղափոխվում, ավելի է արմատավորվում իր բնակավայրում»,- ասում է Մեղրու համայնքապետ Մխիթար Զաքարյանը:





Մխիթար Զաքարյանը Մեդրի համայնքի ղեկավարն է: Մինչ համայնքի միավորումը Նա Ազարակի քաղաքապետն է եղել: Մասնագիտությամբ տնտեսագետը լավ է ճանաչում իր համայնքն ու բնակչներին և բոլոր խնդիրների լուծումը տեսնում է տնտեսական զարգացման մեջ:

«Ե՛վ վարչական կառավարման, և՛ համայնքային բյուջեի ձևավորման և ծախսելու, և՛ կրթական, մշակութային ծառայություններ մատուցելու, և՛ ազգաբնակչությանը տրանսպորտային հասանելիություն և Մեդրիի Նախկին շրջանի տարածքում ծառայություններ մատուցելու առումով Մեդրիի տարածաշրջանում խոշորացումը ժամանակի հրամայականն էր և, բարեբախտաբար, այսօր արդեն իրականություն է»,- եզրափակում է Մխիթար Զաքարյանը:

Համայնքներում
փոփոխության
առաջամարտիկների
հաջողության
պատմությունները



Արտյոմ Գրիգորյան

Վանաձոր համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական

Արտյոմը 2012 թ. ընտրվել է ավագանու անդամ, ապա 2017 թվականից քաղաքապետարանում զբաղեցրել է տարբեր պաշտոններ: Արտյոմն ամենից շատ բավականություն է ստանում ԳՄՅԸ-ի կողմից իրականացվող «Քաղաքների ցանց» նախագծի շրջանակներում ընթացող համագործակցությունից: Նա նշում է, որ այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս հանդիպել նոր մարդկանց, ստեղծել համագործակցության ակտիվ շրջանակ և իր համայնք բերել նոր գաղափարներ:

«Այդ համագործակցությունը և Վանաձորի համայնքապետարանի անդամակցությունը «Քաղաքների ցանցին» համարում ենք մեր ամենամեծ առավելություններից մեկը: «Քաղաքների ցանցը» հիանալի հարթակ է, որտեղ մենք կարողանում ենք կիսվել մեր փորձով, ձեռք բերել նոր գիտելիք և հմտություններ: Ես հասկացա, որ չկան խնդիրներ, որոնք հնարավոր չլինի լուծել, և շատ դեպքերում ֆինանսական ռեսուրսն ամենակարևորը չէ արդյունքի հասնելու համար: Ինձ համար ամենակարևորը փորձն ու գիտելիքն է, որ մենք ստանում ենք ԳՄՅԸ-ի շնորհիվ՝ համագործակցելով «Քաղաքների ցանցի» մեր գործընկերների հետ»,- ասում է Արտյոմը:

Վանաձորի համայնքապետարանը «Քաղաքների ցանցի» անդամ է 2010 թվականից և համագործակցում է Գերմանիայի Ռեգեն շրջանի հետ: Վերջին տարիների համագործակցության թեման աղբի կառավարումն է եղել, քանի որ աղբահանությունը համայնքապետարանի կողմից բնակիչներին մատուցվող հիմնական հանրային ծառայություններից մեկն է:

2017 և 2018 թթ. ուսումնական այցեր են կազմակերպվել դեպի Ռեգեն շրջան, որոնք հնարավորություն են տվել Վանաձորի համայնքապետարանի ներկայացուցիչներին ծանոթանալու Գերմանիայի լավ գարգացած և լավ կառավարվող աղբահանության մոդելի հետ: Համայնքապետարանի՝ աղբահանության խնդիրներով զբաղվող աշխատակիցներն այնտեղ այցելել են Գերմանիայի մի քանի քաղաքներ և ուսումնասիրել աղբի կառավարման տարբեր փուլերը՝ աղբի հավաքում, վերամշակում, տարանջատում՝ ներառյալ աղբի տարանջատման համար արկղերի տեղադրում, դպրոցներում շրջակա միջավայրի պահպանությանն ու աղբի նվազեցմանն ուղղված դասընթացների կազմակերպում: Նրանք նաև այցելել են թափոնների այրման գործարան:

«Ինչպե՞ս առաջ շարժվել: Ո՞րն է այն առաջին քայլը, որ պիտի ձեռնարկի Վանաձորի համայնքապետարանը աղբահանության խնդիրը հասցեագրելու համար,- տարակուսում էր Արտյոմը: - Անելիքները շատ էին, և հնարավոր չէր ամեն ինչ միանգամից անել»: «Քաղաքների ցանցի» շրջանակներում կազմակերպված տարածաշրջանային հանդիպումների և գործընկերների հետ քննարկումների ժամանակ Արտյոմը պարզեց, որ Հարավային Կովկասի երեք երկրներն էլ ունեն նմանատիպ խնդիրներ:

Ամենամեծ խնդիրը բոլոր երկրներում էլ քաղաքացիների վերաբերմունքն է. մարդիկ պարզապես չեն մտածում իրենց իսկ գոյացրած թափոնների նվազեցման ուղղությամբ: **«Մարդիկ տեղյակ չեն վերամշակման ո՞չ բնապահպանական և ո՞չ էլ տնտեսական նշանակությունից»,-** ասում է Արտյոմը:

Արդյունքում Վանաձորի համայնքապետարանը որոշում կայացրեց սկսել քաղաքացիների մասնավորապես երիտասարդ սերնդի իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններից:

Վանաձորի համայնքապետարանը «Այ Էս Էս Դի» ՅԿ հետ համատեղ իրականացրեց թափոնների կառավարման և տեսակավորման վերաբերյալ մի շարք սեմինարներ հանրակրթական դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար



Վանաձորի համայնքապետարանը նախաձեռնեց մի շարք միջոցառումներ՝ ուղղված թափոնների նվազեցմանը և շրջակա միջավայրի աղտոտվածության կանխարգելմանը: Մասնավորապես հանդես եկան երեխաների և դպրոցականների շրջանում թափոնների տարանջատմանն ու վերամշակմանն ուղղված իրազեկվածության բարձրացման նախաձեռնություններով, և այդ թեմաները ներառվեցին դպրոցների ու մանկապարտեզների ուսումնական ծրագրերում:



Տպագրվեցին և քաղաքացիներին բաժանվեցին թեմային առնչվող տեղեկատվական թերթիկներ և պաստառներ: Վանաձորի համայնքապետարանը «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացրեց թափոնների կառավարման և տեսակավորման վերաբերյալ մի շարք սեմինարներ հանրակրթական դպրոցներում՝ ցուցադրելով բնությանը պլաստիկի հասցրած վնասների վերաբերյալ ուսուցողական ֆիլմեր, ներկայացրեց պլաստիկի տեսակների և վերամշակման վերաբերյալ դիդակտիկ նյութեր: Արդյունքում Վանաձորի համայնքապետարանի շենքում, Լոռու մարզի վարչական շենքում, Վանաձորի շուրջ 60 դպրոցներում ու մանկապարտեզներում տեղադրվեցին տեսակավորման համար նախատեսված աղբամաններ: Իսկ կուտակված թափոնները տեղափոխվում են վերամշակման կայաններ:

«Մարդիկ տեղյակ չեն վերամշակման ո՛չ բնապահպանական և ո՛չ էլ տնտեսական նշանակությունից»

«Քաղաքների ցանցը» մի կողմից խթանում է համայնքների միջև երկկողմ համագործակցությունը, մյուս կողմից էլ այն հարթակ է, որտեղ հանդիպում են Հարավային Կովկասի ու Գերմանիայի գործընկեր համայնքները: «Քաղաքների ցանցը» փորձով կիսվելու, միմյանցից սովորելու, ընդհանուր խնդիրները քննարկելու և համատեղ լուծումներ գտնելու մասին է: Եվ հենց դա էլ ցանցի յուրահատկությունն է»,- եզրափակում է Արտյոմը:





Արուսյակ Առաքելյան

Արուսյակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Ստեղծել և ձգտել ստեղծագործական առաջադրանքների. ահա, թե ինչ է Արուսյակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանին ամենից շատ դուր գալիս իր աշխատանքում:

Արուսյակն աշխատում է Արուսյակի համայնքապետարանում արդեն 11 տարի, իսկ վերջին 5 տարիներին աշխատակազմի քարտուղարն է:

Թեև նրա ամենօրյա գործառնությունները ներառում են համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարումը և փաստաթղթաշրջանառության համակարգումը, նա միշտ գտնում է ժամանակ նոր ձևանմուշներ մշակելու և քաղաքացիների դիմումների ուսումնասիրությանը անհատական մոտեցում ցուցաբերելու համար:

«Ես սիրում եմ նոր բաներ ստեղծել, մշակել անհրաժեշտ փաստաթղթեր և ձևանմուշներ: Ես իսկապես խուսափում եմ կարծրատիպերից և շաբլոնից»,- ասում է նա: **«Յուրաքանչյուր իրավիճակ իր անհատական մոտեցումն է պահանջում, և հաճույքով աշխատում եմ, նույնիսկ եթե անհրաժեշտություն է լինում այլ բազմաթիվ իրավական ակտեր թերթել-նայել: Երբեմն բացում եմ իմ պատրաստած որոշումների նախագծերը և զարմանում եմ՝ ոնց կարելի էր այդպիսի բան գրել, ավելի լավը կարելի էր գրել կամ այստեղ այս բառն իզուր եմ գրել և այլն: Այդ մոտեցումն անընդհատ աճելու, ստեղծագործելու, կատարելագործելու մղմամբ է, որ հաճույքով եմ աշխատում»:**

Փորձի փոխանակումը, քննարկումներն այլ համայնքների գործընկերների հետ և ուսումնական այցերն ու գործուղումները Հայաստանի ներսում կամ արտերկրում, տարածաշրջանային սեմինարներն ու գիտաժողովները միշտ դրականորեն են ազդում, քանի որ մտածելու տեղիք են տալիս կամ քաջալերում են Արուսյակին ձեռք բերած լավագույն փորձն իր համայնքում ներդնելու:

Լավագույն օրինակները, որ նշում է, ԳՄՀԸ կողմից կազմակերպված տարածաշրջանային աշխատաժողովն էր Վրաստանում, Էստոնիա կատարած ուսումնական այցը, Ուկրաինայում և Հայաստանում կայացած գիտաժողովները, որոնք նվիրված էին էլեկտրոնային կառավարմանը, քաղաքացիների սպասարկման գրասենյակներին և գեներալազգային բյուջետավարմանը:

«Յուրաքանչյուր իրավիճակ իր անհատական մոտեցումն է պահանջում, և հաճույքով աշխատում եմ, նույնիսկ եթե անհրաժեշտություն է լինում այլ բազմաթիվ իրավական ակտեր թերթել-նայել»

«Այդ համաժողովները, աշխատաժողովները, փորձի փոխանակումը շատ կարևոր են ինձ համար, քանի որ մենք ոչ միայն բուն միջոցառման ժամանակ ենք շփվում՝ օրակարգային հարցերով, այլ նաև դրանցից դուրս. բազմաբնույթ հարցեր ենք տալիս միմյանց՝ այ ձեզ մոտ ինչպե՞ս է, մեզ մոտ այսպես է: Մտերմիկ զրույցներն ինձ համար իսկապես օգտակար են, և երբ մի միջոցառման մասնակիցների հետ հանդիպում ենք մեկ այլ միջոցառման ժամանակ, կարծես լավ հին ընկերներ լինենք»,- ասում է Արուսյակը:

«ԳՄՀԸ շնորհիվ մենք կարողացանք ականատես լինել էլեկտրոնային կառավարման լուրջ ձեռքբերումներին Էստոնիայում, որն առաջատար դիրքեր է զբաղեցնում թվային ծառայությունների մատուցման հարցում: Ըստ էության, յուրաքանչյուր քաղաքացի կարող է լիովին օգտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններից՝ առանց տնից դուրս գալու: Այդ այցը հնարավորություն տվեց մեզ ծանոթանալ մի ամբողջ ենթակառուցվածքի, որպեսզի համակարգը կարողանանք տեղայնացնել նաև մեր համայնքներում: Պետք է խոստովանեմ, որ քայլ առ քայլ մենք այդպես էլ անում ենք»,- ասում է նա:

2017 թ. գարնանը Ուկրաինայում կայացած «Վարչական ծառայությունների մատուցման լավագույն փորձը Ուկրաինայի, Հայաստանի և Վրաստանի փոքր համայնքներում» համաժողովը շատ արդյունավետ եղավ, քանի որ այն նպաստեց տեղեկատվական քարտերի հիմնալի գաղափարը Հայաստան բերելուն:

«Տեղեկատվական քարտը կոնկրետ ծառայության վերաբերյալ ամփոփ տեղեկությունն է: Այն ներառում է բոլոր անհրաժեշտ չափանիշները, որոնք քաղաքացին պետք է իմանա, հատկապես՝ ինչ փաստաթղթեր են պահանջվում, կոնտակտային տվյալներ, ծառայությունը վճարովի է, թե ոչ, իրավական ակտերը, որոնք հիմք են հանդիսանում այս կամ այն որոշման համար և այլն: Տեղեկատվական քարտը քաղաքացու համար ծառայում է որպես ուղեցույց»:

Ուկրաինայից վերադառնալուն պես ձևավորվեց փորձագիտական խումբ, որն ուսումնասիրելով մի քանի ձևանմուշներ՝ դրանց կառուցվածքը և բովանդակությունը, մշակեց 63 տեղեկատվական քարտ:

«Չեմ ուզում անհամեստ թվալ, բայց պետք է խոստովանեմ, որ մեր քարտերը ավելի շատ տեղեկություններ են պարունակում, քան, օրինակ, Ուկրաինայում մեր այցելած Բուլջա համայնքինը»,- ասում է Արուսյակը: Իր իսկ նախաձեռնությամբ նա շարունակաբար ավելացնում է տեղեկատվական քարտերի քանակը իր համայնքապետարանում, քանի որ մատուցվող ծառայությունները բազմաթիվ են:

«Վարչական ծառայությունների մատուցման լավագույն փորձը Ուկրաինայի, Հայաստանի և Վրաստանի փոքր համայնքներում» միջազգային համաժողովին, Կիև, 2017 թ.



Արուսյակի՝ Նոր գիտելիք ու փորձ ձեռք բերելու մշտական ծգտումը, նրա անսպառ հետաքրքրասիրությունն ու նպատակասլացությունը, իր համայնքում որևէ Նոր բան կյանքի կոչելու յուրաքանչյուր հնարավորությունից օգտվելը նպաստել են Արուսյակի համայնքում զգալի փոփոխությունների իրականացմանը:





Աննա Չոբանյան

Արժանի
համայնքապետարանի
ֆինանսատնտեսագիտական
բաժնի պետ

Աննա Չոբանյանն Արժանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետն է: Ծուրջ 22 տարվա աշխատանքային փորձ ունի, որպես փորձագետ հանդես է գալիս տարբեր ծրագրերում, իսկ համայնքի բյուջետային գործընթացի հետ կապված ցանկացած նորամուծություն իրականացնում է հենց ինքը: «**Համայնքում բյուջետային գործընթացի հետ կապված ցանկացած նոր բանի ներդրման արագիլն եմ եղել**»,- ասում է Աննա Չոբանյանը:

Նա երբեք չի խուսափել բյուջետային պլանավորման և ծախսերի հիմնավորումներից: Համայնքի բյուջեն միշտ եղել է ծրագրային ու նպատակային.

«**Մեր բյուջեն երբեք չի եղել զուտ թվեր, այն միշտ պարունակել է ծրագիր: Իսկ այսօր հասել ենք այնպիսի վիճակի, որ ծրագրային բյուջեի կազմմանը մասնակցում է նաև համայնքի բնակիչը, որը շատ լավ տեղեկացված է բյուջեից: Իսկ դրան եկել ենք փուլ առ փուլ, ժամանակի ընթացքում ստեղծելով մի կուռ համակարգ, որն այժմ աշխատում է անխափան: Դեռևս հեռավոր 1990-ականներին Արժանի համայնքի ղեկավարն ասում էր՝ բնակիչը համայնքապետարանից կամ հող է ուզում, կամ փող: Այսօր իրավիճակը փոխվել է. բնակիչն արդեն հստակ գիտի՝ ինչ գործառույթ ունի համայնքապետարանը, կամ ինչ հարցով կարող է դիմել համայնքի ղեկավարին և ինչ պատասխան ակնկալել:**»

Ժամանակի և տեխնոլոգիական զարգացման արդյունքում համայնքում մեծացել է թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը: Քաղաքացին

այժմ շատ ավելի տեղեկացված է, քան առաջ: Տեղեկատվության աղբյուրներն էլ շատացել են: «**Ենթադրենք, համայնքում ասֆալտապատում է իրականացվում, և այն կազմակերպությունը, որ հաղթող է ճանաչվել բաց մրցույթում, թերացումներ է թույլ տալիս. դա արդեն դառնում է հանրային քննարկման նյութ: Բայց որևէ մեկը չի ասում՝ համայնքի ասֆալտապատումը վատն է, ու վերջ՝ դրանով սահմանափակվում, այլ կազմակերպության գործունեությունը կոնկրետ քննարկման նյութ է դարձնում**»,- պատմում է Աննան, որն էական դերակատարում ունի համայնքում թափանցիկության և հաշվետվողականության համակարգի ներդրման գործում:

«**Իսկ այսօր հասել ենք այնպիսի վիճակի, որ ծրագրային բյուջեի կազմմանը մասնակցում է նաև համայնքի բնակիչը, որը շատ լավ տեղեկացված է բյուջեից**»

Համայնքներում ծրագրային բյուջե ձևավորելու և իրականացնելու հարցում հսկայական է եղել միջազգային կառույցների մասնավորապես ԳՄՀԸ աջակցությունը: «**ԳՄՀԸ-ի հետ համագործակցության այս տարիների ընթացքում սովորեցինք ծրագրային բյուջե կազմելու, աշխատանքային գործիքներ մշակելու, գնահատելու և վերլուծելու մեխանիզմները, ինչը շատ կարևոր էր: Նպատակը կար, բայց անելու ձևը չգիտեինք**»,- ընդգծում է Աննա Չոբանյանը:

Արժանի բավականին խոշոր համայնք է՝ մոտ 45 հազար բնակչով, շատ խոշորացված համայնքներից ավելի մեծ բյուջե ունի: Եվ դրա հետ աշխատելը բավականին բարդ է: Այնուամենայնիվ Աննան ունի նորարարություններ ներդնելու կամք ու վճռականություն և մշտապես ցանկանում է իր համայնքում կիրառել դրսում տեսածն ու սովորածը: Իսկ միջազգային կազմակերպությունների կազմակերպած փորձի փոխանակման և վերապատրաստումների շնորհիվ եվրոպական երկրներում տեսել էր բավականին հետաքրքիր ու արդյունավետ լուծումներ բյուջեի կազմման, մասնակցային բյուջետավարման և գենդերազգային բյուջետավարման վերաբերյալ:

«Ավստրիա աշխատաժողովի մեկնելուց առաջ մենք մտածում էինք, որ մեզ հետ այնտեղից բերելու էինք, ասենք, դասագրքեր, կոնկրետ ծրագրեր, թե ոնց է գենդերազգայուն բյուջեն կազմվում: Մտածում էինք՝ առանձին գումար պետք է հատկացվի այդ ծրագրերին գենդերազգայուն ուղղություն հաղորդելու համար: Սակայն Ավստրիայում կոնկրետ օրինակների վրա այդ ամենն ուսումնասիրեցինք և հասկացանք, որ ուղղակի պետք է փոխենք մեր մտածելակերպը բոլոր ծրագրերի հանդեպ, ու մեր համայնքում ավելի հեշտ կարողացանք ցանկացած ծրագրի գենդերազգայունություն հաղորդել»,- բացատրում է Աննան:



Համայնքում նա կարևորում է նաև երեխաների, երիտասարդ սերնդի բնականոն զարգացման իրավունքի ապահովումը: Համայնքապետարանը որոշակի գումար է հատկացնում «Արվյանի երեխաների աջակցության կենտրոն»-ին համայնքի բնակիչների սոցիալականացման և համայնքային կյանքին ինտեգրելու համար: «Այդ ծրագրերում մենք կարողանում ենք ավելի շատ տղաների ընդգրկել՝ կտրելով նրանց փողոցից: Միշտ իրականացվում են մշակութային միջոցառումներ: Բայց տղաներին ավելի դժվար է ստիպել բանաստեղծություն սովորել ու արտասանել: Հիմա ավելացնում ենք սպորտային միջոցառումներ, որտեղ ընդգրկել ենք նաև այդ երեխաների ծնողներին: Տղաներն ավելի հաճույքով մասնակցում են սպորտային միջոցառումների, քան մշակութային»,- պատմում է Աննան:

Աննան նկատում է, որ այսօր, առավել քան երբևէ, բնակիչները հետաքրքրված են համայնքի բյուջեով և դրանից բխող տարբեր ծրագրերով: Ասում է, որ հատկապես երիտասարդների հետ են շատ հանդիպումներ կազմակերպում, քանի որ նրանց հետաքրքիր է հասկանալ, թե ինչպես է կազմվում բյուջեն.

«Համայնքի ուսանողներն են շատ հետաքրքրված, զանգում, հարցեր են տալիս բյուջեից, բյուջեի կազմման ընթացքից, անհանգստացած հետաքրքրվում են, թե երբ ենք սկսելու բյուջեի կազմման աշխատանքները, որովհետև իրենք հարցեր, առաջարկություններ ունեն»:

Բյուջեի շուրջ քննարկումների ակտիվացումը համայնքում շատ է ոգևորում Աննային. «Դա բյուջեի կազմման մասնակցային դրսևորման շատ դրական ցուցանիշ է»,- ասում է նա:



Աննա Ավետիսյան

Մեղրիի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար

«Ես սիրում եմ դժվարություններ հաղթահարելը»,-
ասում է Աննա Ավետիսյանը, ով 2016 թվականից
գրադեցնում է Մեղրիի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի պաշտոնը: Նա
համայնքային իր կարիերան սկսել 2006 թ.
Ագարակի համայնքապետարանում: Վայելելով իր
ընտանիքի և համայնքի բնակիչների աջակցությունը՝
Աննան նվիրվեց իր համայնքի զարգացմանը և
քաղաքացիներին մատուցվող ծառայությունների
կատարելագործմանը:

**«Իմ ընտանիքի
անդամները տեսնում են իմ
նվիրվածությունը համայնքին
ու ըմբռնումով են մոտենում
իմ զբաղվածությանն ու
ծանրաբեռնվածությանը,
որովհետև աշխատանքի
արդյունքը տեսանելի է.
համայնքն օրեցօր զարգանում
է, աղբահանությունն ամեն
օր է իրականացվում, ինչպես
Նան կանաչապատման
աշխատանքներ են տարվում.
մատուցվող ծառայությունների
որակն շատ է բարձրացել»,-**
ասում է նա:

Աննան կարծում է,
որ օրենսդրական
փոփոխությունները և
համայնքների միավորումը
Կառավարության կողմից
ձեռնարկված շատ կարևոր
գործընթացներ են, քանի
որ դրանք նպաստում են
**«համայնքների համաչափ
զարգացմանը, համայնքային
խնդիրները լուծվում են ըստ
առաջնահերթության, բյուջեի
միջոցները օգտագործվում
են նպատակային: Նախկին
համայնքապետարանների
վարչական աշխատողների
ապարատի կրճատման
արդյունքում տնտեսվող
միջոցները ամբողջովին
ուղղվում են մատուցվող
ծառայությունների
ավելացմանն ու
որակի բարելավմանը՝**

**մասնավորապես, կոմունալ
տնտեսության, աղբահանության
աշխատանքներին, նոր
մանկապարտեզների հիմնմանը,
լուսավորության անցկացմանը և
այլն: Այսինքն՝ բյուջեի միջոցներն
ավելի ճիշտ ու ռացիոնալ են
օգտագործվում»:**

**«Բյուջեի միջոցներն
ավելի ճիշտ ու
ռացիոնալ են
օգտագործվում»**

Նա նշում է, որ համայնքների
միավորումը թելադրվում է
համայնքապետարանների
կարողությունների բարելավման
անհրաժեշտությամբ. **«Դա
տրամաբանորեն ճիշտ ձև է,
որը հնարավորություն է տալիս
համայնքներին միավորել ջանքերն
ու ռեսուրսները և ստեղծել ավելի
ճկուն և արդյունավետ համակարգ,
ինչի շնորհիվ էլ հնարավոր
է հասնել համընդհանուր
բարեկեցության: Նոր իրավական
կարգավիճակը թույլ է տալիս
խնայել պետության կողմից
հատկացված և բնակչության
կողմից ստացված միջոցները՝
այդպիսով ունենալով ավելի
նպատակային, կարիքների վրա
հիմնված և առաջնահերթ ծախսեր»:**

Աննային շատ ոգևորում է իր
համայնք նորարարական լուծումներ
բերելու գաղափարը: ԳՄՅԸ
աջակցությամբ վերջին տարիներին
Նա մասնակցել է Հայաստանում և
արտերկրում կայացած տարբեր
միջոցառումների՝ քաղաքացիների
սպասարկման գրասենյակների,
մատուցվող ծառայությունների
և դրանց ստանդարտացման,
գեներալազգային բյուջետավարման
(ԳԶԲ), կանանց հզորացման և այլ
թեմաներով: Նա շատ կարևորում
է իր մասնակցությունը 2017 թ.
ապրիլին Կիևում տեղի «Վարչական
ծառայությունների մատուցման
լավագույն փորձը Ուկրաինայի,
Հայաստանի և Վրաստանի փոքր
համայնքներում» համաժողովին,
որտեղ հնարավորություն ունեցավ
ծանոթանալու վրացի և ուկրաինացի
գործընկերների՝ Քաղաքացիների
սպասարկման գրասենյակների
հիմնման, քաղաքացիներին
ծառայությունների մատուցման,
տեղեկատվական քարտերի
ներդրման փորձին:

2017 թ. վերջին ԳՄՅԸ աջակցությամբ
և Գերմանիայի, Շվեյցարիայի
ու ԱՄՆ կառավարությունների
համաֆինանսավորմամբ Մեղրիում
հիմնվեց Քաղաքացիների
սպասարկման գրասենյակը՝
հնարավորություն ընձեռնելով
Աննային կիրառելու Ուկրաինայում
ուսումնասիրած լավագույն փորձն իր
համայնքի ԲՍԳ-ում:

«Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքը դարձել է ավելի արդյունավետ, ավելացել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, բյուջետային և ֆինանսական հաշվառումն ավելի դյուրին է դարձել, ինչպես նաև բարելավվել է բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը և այլ գործառույթների իրականացումը: ՀԿՏՀ ներդրումը նպաստեց ծառայությունների ավելի հասանելի լինելուն և տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությանը: Այս փոփոխություններին զուգահեռ այժմ ավելի հեշտ է մշտադիտարկել համայնքապետարանների աշխատանքը», - նշում է Աննան:

2018 թ. Վրաստանում կայացած ԳԶԲ վերաբերյալ գիտելիքների և փորձի փոխանակումից ոգեշնչված Հայաստան վերադառնալուսն պես Աննան ծեռք բերված գիտելիքը ներկայացրեց Մեդրիի համայնքապետին և ավագանու անդամներին: Նա վերլուծեց իրավիճակը և փորձեց վերհանել իր համայնքի կանանց հիմնախնդիրները: Առաջնահերթությունների քննարկմանը նա ներգրավեց նաև տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներին և ակտիվ քաղաքացիներին՝ դիտարկելու գենդերային հավասարությունը տեղական մակարդակում պլանավորման և բյուջետավարման գործընթացներում:

«**Բյուջեի օպտիմալացումը թույլ կտա խնայել որոշ միջոցներ ԳԶԲ նախաձեռնությունների իրականացման համար: Մենք մշակում ենք գործողությունների պլան՝ նպատակ ունենալով բյուջեի նախապատրաստման փուլում գենդերազգայուն տարրեր ներկայացնելու, որպեսզի հանրային լսումների ժամանակ կանանց կողմից բարձրաձայնված նախաձեռնությունները արտացոլվեն բյուջեի վերջնական նախագծում**», - ասում է Աննան և ավելացնում, որ բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները վերջում կուսումնասիրվեն և թույլ կտան հասկանալ, թե որքանով է անդրադարձ կատարվել գենդերային հարցերին:

Աննան գոհ է ծառայությունների մատուցման ոլորտում ծեռք բերված արդյունքներից և լիահույս է, որ Մեդրիում ԳԶԲ ներդրման ուղղությամբ ձեռնարկված ջանքերի արդյունքները տեսանելի կլինեն առաջիկա ֆինանսական տարում:



«Վարչական ծառայությունների մատուցման լավագույն փորձը Ուկրաինայի, Հայաստանի և Վրաստանի փոքր համայնքներում» միջազգային համաժողովի շրջանակում Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունների այցն Ուկրաինայի Բուչա համայնք, 2017 թ.

«**Մենք մշակում ենք գործողությունների պլան՝ նպատակ ունենալով բյուջեի նախապատրաստման փուլում գենդերազգայուն տարրեր ներկայացնելու**»





Գոհար Դավթյան

Դիլիջանի
համայնքապետարանի
ֆինանսական բաժնի պետ

Գոհար Դավթյանը 2006 թվականից Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետն է: Զբաղվում է բոլոր ֆինանսական գործառնություններով, նաև ծրագրային բյուջեի կազմման պատասխանատուն է:

Գոհար Դավթյանին իր գործի մեջ ամենաշատը գրավում է **«բյուջետային գործընթացը՝ բյուջեի կազմումն ամենասկզբից»:** Մեծ ոգևորությամբ պատմում է, թե ինչպես են քննարկումներն իրականացնում:

«Նախնական ձևաչափեր ենք մշակում, բաժանում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, այդ փաստաթուղթը տեղադրում ենք նաև առցանց հարթակներում, որպեսզի բնակիչները ակտիվորեն մասնակցեն, քվեարկեն: Նույնն անում ենք նաև «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի և համայնքային կայքի միջոցով: Վերջում ամփոփում ենք քննարկումների և քվեարկության արդյունքներն ու նորից ներկայացնում հանրային քննարկման»:

Դիլիջան միավորված համայնքում կազմակերպվող քննարկումներին հրավիրվում են քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչները: Դրանից հետո միայն, իրենց գաղափարներն էլ ներգրավելով, ընդհանուր հանրային քննարկում են իրականացնում, որին մասնակցում են բոլոր ցանկացողները:

«Բոլոր առաջարկները հաշվի ենք առնում, հնարավորության դեպքում՝ ներառում համայնքի բյուջեում: Ինձ ամենաշատը մասնակցային ծրագրային բյուջեի կազմման գործընթացն է դուր գալիս: Բնակիչը շատ մանրամասն իմանում է՝ համայնքի յուրաքանչյուր դրամն ինչի վրա է ծախսվում, ինչ ծրագիր է այդ գումարով իրականացվում»,- կիսվում է Գոհարը:

Նա պատմում է, որ արդյունքահեն ծրագրային բյուջե կազմում է դեռևս 2014 թվականից, բայց 2006 թ-ից բյուջեն ներկայացնում է ըստ աշխատանքների:

«Բնակիչը շատ մանրամասն իմանում է՝ համայնքի յուրաքանչյուր դրամն ինչի վրա է ծախսվում, ինչ ծրագիր է այդ գումարով իրականացվում»

«Այսինքն, իմ պաշտոնավարման առաջին օրվանից աշխատել եմ այդպես: Մենք բնակիչներին պարզապես թվեր չենք տվել ու ասել՝ քննարկեք, մենք մշակել ենք հակիրճ բյուջե՝ ըստ աշխատանքների, հետագայում այն կոչվեց արդյունքահեն, հետո՝ ծրագրային: Ինձ մոտ պահպանվում է յուրաքանչյուր տարվա արխիվը: Ամեն տարի բնակիչն իմացել է, թե քանի մանկապարտեզ կա, քանի երեխա է հաճախում այդ մանկապարտեզ, քանի մանկավարժ է աշխատում, ինչքան է սննդի համար գումար հատկացվում. այդ ամենը մանրամասն ներկայացվել է հանրությանը: Այսինքն, իրենք լավ գիտեն, թե ինչպես է գոյանում համայնքի բյուջեն, և իրենց վճարած գումարը լուրմա առ լուրմա, ինչ աշխատանքների վրա է ծախսվում»:

Այս հմտությունները Գոհարը ձեռք է բերել ոչ միայն տարիների ընթացքում՝ իր գործում մասնագիտանալով, այլև միջազգային կազմակերպությունների բազմաթիվ դասընթացների, վերապատրաստումների մասնակցության, Նպատակային ուսուցման արդյունքում: Մասնավորապես ԳՄՅԸ-ի աջակցությամբ մասնակցել է մի շարք վերապատրաստումների, փորձի փոխանակման արտերկրյա իր գործընկերների հետ:

Այդ վերապատրաստումների արդյունքում էլ ծանոթացել է «գենդերազգայուն բյուջե» հասկացությանը, ինչն իրեն սկզբից շատ տեսական էր թվում: Նա կարծում էր՝ առանձին բյուջե պետք է գրվի: Սակայն տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ այցերի արդյունքում նա համայնքային բյուջեն սկսեց մեկ այլ՝ գենդերազգայունության տեսանկյունից դիտարկել:

«Իրականում մինչ այդ էլ ունեինք այդ ծրագրերը, բայց չէինք պատկերացնում, որ դրանք կարելի է դիտարկել գենդերային հավասարության տեսանկյունից: Այդպես կարողացանք բյուջեն նաև վերլուծել այդ տեսանկյունից: Այսինքն, մենք լրացուցիչ գումարներ չենք ներդնում, մեր եղած գումարներով կարողանում ենք մեր բյուջեին տալ գենդերազգայուն կամ սոցիալական ուղղվածություն», - պատմում է Գոհարը:

Գենդերազգայուն բյուջետավարման վերաբերյալ ձեռք բերած փորձն ու գիտելիքը Գոհարը ներկայացրեց համայնքի ղեկավարին, աշխատակազմին, ակտիվ բնակիչներին: Հաջորդ քայլն ավագանուն ներակայացնել ու հավանություն ստանալն էր, որպեսզի 2019 թ. բյուջեն արդեն գենդերազգայուն լիներ:

«Ավագանու հետ մենք մշակեցինք ճանապարհային քարտեզ և սկսեցինք այն իրականացնել», - ասում է նա:

Գոհարը պատմում է, որ գենդերազգայուն բյուջեի համար ավագանու հավանություն ստանալը դյուրին չի եղել: **«Սկզբում բոլորն էլ մի տեսակ թերահավատորեն էին ընդունում ասածներս, բայց ես, մինևույնն է, ներկայացրեցի, որ մենք բնակվում ենք միավորված համայնքում, որի յուրաքանչյուր բնակավայր ունի իր խնդիրները: Օրինակ՝ Հաղարծին բնակավայրում ջրագիծ ենք փոխել՝ դրանով թեթևացնելով կանանց հոգսը տնային տնտեսությունում: Դեպի դպրոց և մանկապարտեզ տանող ճանապարհի ասֆալտապատումը ևս կարելի է դիտարկել՝ որպես գենդերազգայուն, քանի որ երեխաներին հիմնականում կանայք են այնտեղ ուղեկցում»**:

Որպես գենդերազգայուն բյուջետավարման վառ օրինակ Գոհարը նշում է մոբայլ մանկապարտեզի ստեղծումը Դիլիջան համայնքի գյուղական երկու բնակավայրում: **«Ստեղծեցինք մոբայլ մանկապարտեզներ, որպեսզի բնակավայրերի կանայք կարողանան իրենց երեխաներին երեք-չորս ժամով մանկապարտեզ տանել, աշխատանք գտնել, սեփական գործ հիմնել կամ տնամերձ հողամասը մշակել և այդ ձևով եկամուտ ստանալ: Մենք տվեցինք հնարավորություն, որպեսզի այդ բնակավայրերի կանայք էլ ոչ միայն իրենց զգան, այլ նաև դառնան մեր համայնքի լիարժեք անդամ, կարողանան մասնակցել համայնքային կյանքին»**:

Այսօր արդեն ինքը՝ Գոհարը, ԳՄՀԸ հովանու ներքո ստեղծված փորձագիտական խմբի անդամ է, որը զբաղվում է գենդերազգայուն բյուջետավարման հայեցակարգի մշակմամբ՝ աջակցելու այլ համայնքներին մշակել իրենց ծրագրային և գենդերազգայուն բյուջեները:

«Մշակված հայեցակարգը հասանելի կդարձնենք բոլոր այն համայնքների համար, որոնք կցանկանան որոշակի գենդերազգայուն ուղղվածություն հաղորդել իրենց բյուջեներին: Այն պետք է կիրառելի լինի բոլոր այն համայնքներում, որոնք կցանկանան: Մենք պետք է կարողանանք բյուջեն ոչ միայն գենդերազգայուն դարձնել, այլ նաև սոցիալական խոցելի խավերի խնդիրներին լուծումներ առաջարկել: Ընդհանրապես, բյուջեն պիտի այնպիսին լինի, որ բնակչության բոլոր խավերն էլ ներգրավված լինեն և իրենց ավելի ապահով զգան», - եզրափակում է Գոհարը:

Գոհար Դավթյանն ու Աննա Չոբանյանն Ուկրաինա կատարած ուսումնական այցի ժամանակ





Գևորգ Եղիազարյան

Աշտարակ համայնքի
ղեկավարի տեղակալ

Գևորգ Եղիազարյանը համայնքային գործունեությամբ զբաղվում է 1997 թվականից. նախ աշխատել է համայնքապետարանի աշխատակազմում, այնուհետև՝ տարբեր միջազգային ծրագրերում՝ որպես փորձագետ, իսկ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում աշխատում է 2012 թ. հոկտեմբերից. **«Կարելի է ասել՝ ստացվել է այնպես, որ աշխատել եմ Աշտարակ համայնքի բոլոր ղեկավարների հետ»:**

Ի պաշտոնե զբաղվում է ֆինանսական քաղաքականությամբ, աշխատանքային կառավարման գործառույթներով, կրթամշակութային ռազմավարության ու քաղաքականության իրականացմամբ և հանրային կապերով: Նա շատ ոգևորված է իր աշխատանքով և գործառույթներով: **«Սիրում եմ նորարարությունը, սիրում եմ յուրաքանչյուր գործընթացի մեջ կրեատիվ մոտեցումները: ՏԻՄ-ը սիրում եմ միայն, կարելի է ասել, հենց դրա համար, որ օրենսդրական դաշտը թույլ է տալիս ցանկացած գործընթաց իրականացնել յուրովի, և դրա արդյունքում կոնկրետ իմ նախաձեռնությամբ Աշտարակ համայնքում իրականացվեցին մի շարք պիլոտային ծրագրեր՝ տարբեր միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ և նախաձեռնությամբ, և բազմաթիվ ծրագրեր հենց համայնքի բյուջեի միջոցներով»,-** ասում է Գևորգը:

2016 թ. ԳՄՀԸ-ն Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների համաֆինանսավորմամբ աջակցեց Աշտարակում քաղաքացիների

սպասարկման գրասենյակի հիմնմանը, իսկ հետագայում՝ տեղեկատվական քարտերի ներդրմանը: Աշտարակը նաև առաջին համայնքներից էր, որտեղ փորձարկվեցին ծրագրային բյուջետավարումը և հակիրճ բյուջեների հանրային քննարկումները համայնքի վեբ-կայքի միջոցով՝ կիրառելով Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը: Հարգելով օրենքն ու քաղաքացիների իրավունքները՝ Գևորգը հատուկ ուշադրություն է դարձնում մասնակցային ժողովրդավարությանը:

Հակիրճ բյուջեն, որն ըստ էության եկամուտների ու ծախսերի մատչելի վերլուծությունն է քաղաքացիների համար, վերբեռնվում է համայնքային կայքում: Երբ որոշվում են հանրային լուծումների օրերը, այդ տեղեկությունը տարածվում է տարբեր աղբյուրների՝ սոցիալական ցանցերի, մանկապարտեզների ու դպրոցների միջոցով՝ այսպիսով առավելագույնս իրազեկելով հանրությանը հանրային ծախսերի վերաբերյալ: Այնուհետև նախագծերը քննարկվում են առցանց, և բնակչության կարծիքը հաշվի է առնվում համայնքային բյուջեի վերջնականացնելու ժամանակ:

«Կարևորում եմ թափանցիկ գործելակերպը, կարևորում եմ յուրաքանչյուր լուծմանի և դրամի դիմաց հաշվետու լինելու գաղափարը, կարևորում եմ քաղաքացուն արագ և որակով և ծառայությունների մատուցումը»,- ասում է նա:

«Հակիրճ բյուջեի ձևաչափի մեջ ներկայացվում են վերջին երեք տարիների վերլուծությունը՝ եկամուտների և ծախսերի մասով, համայնքի տեսլականը, համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը, որտեղ նկարագրվում է թե՛ բյուջեն ինչ ուղղվածություն ունի և ինչի վրա են ծախսվելու փողերը, հետո ներկայացվում են ընթացիկ ծախսերն՝ ըստ ծրագրերի և միջոցառումների:

Որպեսզի ավելի պարզ լինի, օրինակ բերեմ. ենթադրենք՝ ծրագիրը նախադպրոցական կրթության ապահովումն է Աշտարակ համայնքում: Միջոցառումներից մեկն է ապահովել Արևիկ մանկապարտեզի գործունեությունը: Ենթադրենք՝ մեկ տարվա կտրվածքով սպասարկելու ենք ամսական 180 երեխայի, աշխատելու է 25 աշխատող, որից տասը՝ մանկավարժ, տրվելու է սնունդ 3 անգամ: Որպեսզի մանկապարտեզը գործի, ծախսվելու է, ենթադրենք, 30 մլն. դրամ: Այսինքն՝ պարզ է ու հասկանալի: Նախկինում գրվում էր, ենթադրենք, նախադպրոցական կրթություն՝ 30 մլն. դրամ: Դե արի ու հասկացի՝ դա ինչ է: Իսկ այս տարբերակի սակայությունը կայքում քաղաքացուն հնարավորություն է տալիս ներբեռնելու, տպելու, կարդալու և քննարկելու ընտանիքում, ինչից հետո քաղաքացին կարող է մեկնաբանությունների տողում կարծիք թողնել:

Մեկնաբանությունները կարող են ինչպես ՀԿՏՀ-ում թողնել, այնպես էլ սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում: SMS քվեարկություններ ենք անցկացնում և հանդիպումներ կազմակերպում:

Գևորգը շատ թերահավատորեն էր վերաբերվում գենդերազգայուն բյուջետավարման գաղափարին. կարծես թե, դրա ընդդիմախոսներից մեկն էր: Այնուամենայնիվ, ԳՄՅԸ կողմից հարևան երկրների գործընկերների հետ տարբեր ձևաչափերով կազմակերպված փորձի փոխանակումից հետո Գևորգը փոխեց իր դիրքորոշումը և դարձավ Հայաստանի համայնքներում գենդերազգայուն բյուջետավարման ներդրման ջատագովներից մեկը:

Աշտարակը Հայաստանի առաջին համայնքներից էր, որ կիրառեց այս գործիքը կամավոր հիմունքներով: Իր համայնքում այս մոտեցումը փորձարկելուց հետո նա աջակցեց հայեցակարգի հետագա զարգացմանն ու ճշգրտմանը և դրա ներդրմանը Հայաստանի այլ համայնքներում:

«Մեր համայնքի բյուջեն գենդերազգայուն դեռևս չի համարվում: Մենք կամավոր կերպով պիլոտային ծրագրային բյուջետավարում իրականացրեցինք մեր համայնքում, իսկ հիմա էլ գենդերազգայուն բյուջետավարման տարրեր ենք ներդնում ծրագրային բյուջեում: Մի քանի այլ համայնքներ, օրինակ՝ Աբովյանն ու Ջերմուկը, արդեն ունեն ավագանու կողմից հաստատված մեկ-երկու գենդերազգայուն ծրագիր»,- ասում է նա:

Գենդերազգայուն բյուջետավարման ներդրումն այդքան էլ սահուն չէ Հայաստանի համայնքներում: Ոմանց համար ավելի հեշտ է ստանալ ավագանու

«Համայնքն էլ պիտի պատրաստ լինի ոչ միայն որոշակի ֆինանսական ռեսուրսներ տրամադրել, այլ նաև պետք է պատրաստ լինի փոփոխությունների, նոր մոտեցումներ և մեթոդաբանություններ փորձարկելու»

հավանությունը, մյուսների համար բավականին ժամանակ է պահանջվում բացատրելու, այլ երկրների փորձով կիսվելու և համոզելու համար:

«Իմ ընդդիմադիր կեցվածքը հաջորդ օրը փոխարինվեց ավելի շատ սպունգային պահվածքի, այսինքն՝ ինչքան հնարավոր է շատ վերցնել, իսկ այլ երկրների գործընկերների հետ քննարկումների արդյունքում ստացվեց այնպես, որ հասկացա, որ դա իրոք մեր համայնքներին պետք է: Մենք, գենդեր ասելով, չգիտես ինչու, սոցիալական երրորդ սեռ ենք պատկերացնում, բայց երբ որ ուսումնասիրում ես ամբողջ մեթոդաբանությունը և տերմինոլոգիան գենդերի և բյուջեի համատեքստում, հասկանում ես, որ այո՛, եթե մարդիկ կինն ու տղամարդը, իրավունքների մասով պիտի լինեն հավասար, ապա նաև նրանց վրա ծախսվող գումարները պիտի լինեն հավասար»,- ասում է Գևորգը:

Հիմնվելով տեղի կանանցից հավաքած գաղափարների վրա՝ նա 2019 թ. Աշտարակ համայնքի ֆինանսական ծրագրում ներկայացրեց այս ուղղությամբ իրականացվելիք միջոցառումներ և նախագծեր: Նշված լավագույն օրինակը նախադպրոցական հաստատություններում խմբերի թվի ավելացումն էր, ինչը ոչ միայն հնարավորություն կտար ավելի շատ երեխաների հաճախել մանկապարտեզներ, այլ նաև կանանց համար աշխատատեղեր ստեղծելու և պետական մարմինների հետ ավելի սերտ համագործակցելու հնարավորություն կընձեռներ:

«Մեր հասարակությունում կնոջ և տղամարդու միջև բանավեճերը դեռևս լավ չեն ընկալվում՝ խորթ են և հարիր չէ, իսկ փոքր համայնքներում տեղային հոգեբանությունը բերում է նաև նրան, որ այդ կինը եթե սկսի ըմբոստանալ կամ բանավեճի մեջ մտնել, ապա հասարակությունը նրան ճիշտ չի որակի: Այս կտրվածքով կանանց առաջարկների ի կատար ածումը կբերի նրան, որ տղամարդիկ կմտածեն և կընդունեն, որ կանայք իրավունք ունեն առաջարկներով հանդես գալու և տղամարդու խոսքը վերջնական չէ, որ վերջնական խոսքը կարող է նաև կինը ասել»,- ասում է նա: Գևորգը կարծում է, որ իրավիճակը տարբերվում է համայնքից համայնք: Աշտարակն այն համայնքներից է, որ միշտ պատրաստ է նորարարական լուծումներ ներկայացնել, նոր մոտեցումներ մշակել, փորձարկել դրանք և հաջողություններ գրանցել:

«Համայնքն էլ պիտի պատրաստ լինի ոչ միայն որոշակի ֆինանսական ռեսուրսներ տրամադրել, այլ նաև պետք է պատրաստ լինի փոփոխությունների, նոր մոտեցումներ և մեթոդաբանություններ փորձարկելու: ԳՄՅԸ-ն մեզ միշտ աջակցում է այս հարցում, և նրանց աջակցությունը միշտ նպատակային է՝ պայմանավորված անհրաժեշտությամբ»,- ասում է Գևորգը: Աշտարակ համայնքը տարբեր մրցանակաբաշխությունների հաղթող է. ստացել են «Թափանցիկ համայնք» և «Լավ նախաձեռնություն» անվանակարգերի մրցանակներ:

Գևորգ Եղիազարյանն ուկրաինացի գործընկերներին ներկայացնում է Աշտարակի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը





Իրինա Արսենյան

Քանաքեռավան համայնքի
ավագանու անդամ, հայոց լեզվի
և գրականության ուսուցչուհի

Իրինա Արսենյանը Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ավագանու անդամ է ընտրվել 2016 թ. հոկտեմբերին: Նա որոշում կայացրեց առաջադրվել ավագանու ընտրություններին՝ ոգեշնչվելով ակտիվ կին քաղաքական գործիչների հավաքական կերպարով: Հավատալով կանանց՝ փոփոխություններ իրականացնելու զորությանը՝ թեկուզև աստիճանաբար, նա որոշեց փորձել իր ուժերը և նպաստել իր համայնքի զարգացմանը, նույնիսկ եթե դա որևիցե փոքր բան լինի:

Ընտրություններին մասնակցելու նրա որոշումը սատարել են ընտանիքն ու ընկերները՝ խրախուսելով օգտագործել իր ներուժը մյուսների բարօրության համար:

«Իմ սուրբ պարտքն էմ համարում մասնակցել ավագանու բոլոր նիստերին, լինել ավելի ուշադիր և պատասխանատու իմ համայնքի և շրջապատի կարիքների, յուրաքանչյուր ծառի և թփի նկատմամբ: Փորձում եմ նկատել այն ամենը, ինչը կարող է վրիպել ավագանու տղամարդ անդամի աչքից»:

«Քաղաքականությունում որպես նորեկ» իրավեր ստանալու դեպքում Իրինան մասնակցում է ցանկացած աշխատաժողովի, վերապատրաստման կամ սեմինարի, քանի որ «միշտ էլ կա սովորելու որևէ նոր բան, թեկուզև եթե կրկնվում է»: Իրինան միշտ հետադարձ հայացք է զգում այդ միջոցառումներին և «քաղում» իր համար ամենակարևորը: ԳՄՀԸ-ի կազմակերպած միջոցառումներից նա հատկապես օգտակար գիտելիք է ստացել Թբիլիսիում կայացած գեներալային հարցերով պատասխանատուների

տարածաշրջանային համաժողովից, որտեղ բարձրացվեց սոցիալական աշխատողի դերը համայնքներում:

«Միշտ կարծել եմ, որ այդ պաշտոնը կարելի է համատեղել մեկ այլի հետ, օրինակ՝ խորհրդականի: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասի երկրների գործընկերներից բաղկացած խմբում մի շարք քննարկումներից հետո համոզվեցի, որ այդ

«Արդեն երկրորդ տարին է՝ մեր համայնքում ունենք սոցիալական աշխատող: Մեր հարևան երկրներում այս պաշտոնը բավականին կայացած է, մինչդեռ Հայաստանում դա երիտասարդ մասնագիտություն է»

պաշտոնը պահանջում է ոլորտի մասնագետ, քանի որ մեր երկրում գործնականում գոյություն չունի համայնք, որը չունենա սոցիալական խնդիրներ: Վրաստանի գործընկերներն այս ոլորտում շատ փորձառու են, և մենք ունեցել ենք շատ արդյունավետ քննարկումներ: Ես բավականաչափ գիտելիք եմ ձեռք բերել այդ ոլորտում աջակցելու իմ համայնքին, երբ այդ պաշտոնը դառնա պարտադիր», - ասում էր Իրինան դեռևս 2017 թվականին:

2019 թ. վերջին նա հպարտորեն պատմեց իրենց համայնքում սոցիալական աշխատողի հաստիքի ստեղծման մասին: 5000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքներում սոցիալական աշխատողի հաստիքը ցանկալի է, մինչդեռ 5000-ից ավելի պարագայում պարտադիր: Քանաքեռավանն իր 4000-ից էլ քիչ բնակչությամբ այն «ցանկալի» համայնքներից մեկն է, որտեղ ներդրվել է սոցիալական աշխատողի ինստիտուտը: Նա ասում է, որ վերջին երկու տարվա ընթացքում Քանաքեռավան համայնքում սոցիալական աշխատողի պաշտոնի առկայությունը նպաստել է մի քանի դրական փոփոխությունների:

«Այժմ ակտիվ համագործակցության ցանց է ստեղծվել Սոցիալական հարցերի նախարարության, Կոտայքի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների վարչության հետ, երկու կարևոր համագործակցություն է հաստատվել «ՍՕՍ մանկական գյուղեր» և «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամների հետ: Առաջինն ընտանիքի ամրապնդման իր ծրագրի միջոցով մեր համայնքի վեց ընտանիքներին տրամադրում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, սնունդ, հագուստ և դեղորայք, իսկ երկրորդն աջակցում է 40 ընտանիքի՝ սնունդ տրամադրելով»:

Բացի այդ երեխաների կրթությունը նույնպես սոցիալական աշխատողի ուշադրության կենտրոնում է: **«Մենք ունենք մի ներառական կրթություն ստացող երեխա, որն ունի հենաշարժողական խնդիր և չի կարող դպրոց հաճախել, իսկ տնային ուսուցումը կազմակերպվել է սոցիալական աշխատողի օգնությամբ»:**

Սոցիալական աշխատողի կարևորությունը, աշխատանքի նկարագրությունը, գործառույթները և հաստիքի դերը ձեռք են բերվել և մշակվել են ԳՄՅԸ-ի կողմից կազմակերպված տարածաշրջանային սեմինարների ընթացքում:

ինձ համար իսկապես կարևոր էր, քանի որ եթե չլինեին այդ աշխատատեղովները, ես հավանաբար չէի ունենա այդքան գիտելիք համայնքում սոցիալական աշխատողի դերի մասին: Այդ հաստիքն իմ ուշադրության կենտրոնում չի եղել մինչ Կրաստան այցելելը: Երբ հարևան երկրների գործընկերները խոսեցին իրենց փորձի մասին, ես անմիջապես վերցրեցի այդ գաղափարը և մեր համայնքապետի աջակցությամբ ներկայացրեցի այդ հաստիքը համայնքում», - ասում է Իրինան:





Իրինա Յոյան

Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ

«Ճատ տարիներ առաջ լրագրությամբ էի զբաղվում, հիմնականում իրադարձային նորություններ էի լուսաբանում, բայց նաև հասարակական ակտիվ գործունեություն էի ծավալում, ինչի արդյունքում էլ խնդիրներին բուլդոզերին այլ կերպ էի նայում: Սկսում էի ուսումնասիրել թեմաները, հետաքննական նյութեր էի ավելի շատ պատրաստում, կոռուպցիոն խնդիրներ գտնում: Եթե այդ հասարակական գիտակցումը չլիներ, այդ խորությամբ ուսումնասիրություններ չէի անի: Ես՝ որպես լրագրող, ոչ միայն հնչեղություն էի

տալիս հասարակական և համայնքային խնդիրներին, այլ գնում էի այդ խնդիրների լուծման հետևից: Սա ինքնանպատակ չէր, որովհետև ժամանակի ընթացքում, երբ մտնում ես այդ խնդիրների մեջ, շատ լավ ես սկսում հասկանալ՝ որտեղից են դրանք առաջանում, լուծումներն ինչպիսին կարող են լինել: Եվ, աստիճանաբար, որպես ակտիվ հասարակական գործիչ՝ արդեն գնում ես դեպի քաղաքականություն, որովհետև ուզում ես համայնքային այդ խնդիրների լուծման գործընթացում դու ևս ներդրում ու մասնակցությունն ունենալ: Եթե չլիներ իմ հասարակական ակտիվությունը, հետաքրքրվածությունը, մասնակցությունը այդ խնդիրների լուծման գործընթացում, չէր լինի նաև քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունս»:

2018 թ. սկսած Իրինա Յոյանը Գորիս համայնքի ղեկավարի տեղակալն է: Նա նշանակալի դերակատարություն ունի միավորված համայնքում աշխատանքների համակարգման և խնդիրների լուծման գործում: Իրինան վաղուց է զբաղվում ակտիվ քաղաքականությամբ.

մասնակցել է ավագանու ընտրություններին, որպես Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն»-ի «Ճառավիղ» ակումբի ղեկավար և լրագրող ակտիվորեն լուսաբանել է Գորիսում տեղի ունեցող իրադարձությունները «Ազատություն» ռադիոկայանի և այլ լրատվամիջոցների համար, աշխատել է Գորիսի համայնքապետարանում՝ որպես մամուլի քարտուղար: Նա վստահ է, որ կինն ընդհանրապես լուրջ դերակատարություն կարող է ունենալ համայնքի զարգացման գործում:

«Շնորհից և կանայք տնտեսությունը վարելու լավ փորձ ունեն, և այդ սոցիալական բաղադրիչը կանանց մեջ շատ ավելի ակտիվ է: Իհարկե, չեմ կարող ասել, որ դա զուտ կնոջն է հատուկ: Որոշում կայացնելը բացառապես կանանց կամ բացառապես տղամարդկանց մասնակցությամբ շատ անարդյունավետ է, բայց համատեղ աշխատանքը բերում է արդյունավետ լուծման», - ասում է Իրինան: Նա կարծում է, որ եթե նույն հարցի շուրջ կանայք իրենց մոտեցումներն են ներկայացնում, տղամարդիկ՝ իրենցը, կայացված որոշումները համայնքի ողջ բնակչության շահերից են բխում:

Իրինա Յոյանը Կանանց «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամին անդամակցում է դեռևս 2009 թ-ից: Կանանց հիմնահարցերով

հետաքրքրված անձանց խումբ էր ձևավորվել Գորիսում, և այդ ժամանակ կենտրոնի տարբեր նախաձեռնություններ իրականացվում էին հենց կամավոր կանանց ջանքերով: «Վարձատրություն չկար,- հիշում է Իրինան,- պարզապես ուզում էինք ներդրում ունենալ այդ նախաձեռնություններում՝ փորձելով փոխել համայնքի կանանց և երիտասարդների կյանքը»: Ասում է, որ առաջին տարիներին լուրջ չէին ընդունում իրենց, բայց հետևողական աշխատանքի ու դրա արդյունքում արձանագրված դրական փոփոխությունների շնորհիվ կարողացան ապացուցել, որ կանանց գործունեությունն ու դերակատարությունը շատ մեծ կարող է լինել համայնքի զարգացման հարցերում:

